13-19 ՄԱՐՏ 2026 ՈՒՐԲԱԹ 009(5877)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## 2030 տարվա բանտարկություն է սպասվում Էրդողանի մրցակցին

Թուրքական դեմոկրատիան նորանոր նվաճումներ է արձանագրում, ուսանելի դասեր՝ բոլոր բռնապետերին ու բռնապետիկներին։ Այս օրերին Ստամբուլում դատական գործ է ընթանում նույն քաղաքի նախկին քաղաքապետ **Էքրեմ Իմամօղլուի** եւ քաղաքապետարանի նախկին աշխատակիցների դեմ, թվով՝ շուրջ 400 հոգի, բոլորին էլ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մեղադրանքով։ Հարուցված գործերն այնքան շատ են, որ եթե դատարանը դրանք հաստատի ու վճիռ տա համապատասխան հոդվածներով, ապա, ասում են մասնագետները, Իմամօղլուին սպասում է ընդհանուր՝ 2030 տարվա ազատազրկում։

➩3

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Խաբուսիկ խաղաղությանը սպասելիս

Թերեւս 1000-րդ անգամ վերահաստատվում է այն ճշմարիտ խոսքը, թե դյուրին է պատերազմ սկսելը, բայց դժվար՝ այն ավարտելը։ Ձայնային գալարումների մեջ գտնվող ողջ աշխարհն է սպասում Մ. Նահանգներ-Իսրայել դաշինքի Իրանի դեմ սկսած պատերազմի ավարտին, որն ուշանում է, քանզի պատերազմը հրահրողներն իրենք չգիտեն, թե ինչի՞ են հասել, որքանո՞վ են իրականացրել իրենց սկզբնական՝ հայտարարած նպատակը։

Այո, զգալիորեն թուլացել է Իրանը, նրա հրթիռահրետանային զինատեսակները, անօդաչու թռչող սարքերն ու կործանիչները ամեն օր ավելի քիչ են ամերիկաիսրայելական թիրախներին հարվածում, սակայն նախագահ **Թրամփի** առաջադրած casus belli-ն, ավելի ճիշտ՝ նախապայմանները՝ կրոնապետական իշխանության հեռացում եւ միջուկային կարողականության ոչնչացում կամ հրաժարում, տեղի չունեցան եւ հավանաբար տեղի չունենան երբեւիցե, հակառակ կրոնապետերի եւ բարձրաստիճան զորահրամանատարների իրարահաջորդ սպանություններին, նույն տանդեմի ձեռքով։

Իսկ ինչ վերաբերում է Իսրայելի վարչապետ **Նեթանյահուի** պահանջին՝ ոչ ավել եւ ոչ պակաս՝ ամբողջական կործանումը Իրանի Իսլամական Հանրապետության, անկարելի երազ կարող է մնալ, որքան էլ որ հայտնի տանդեմը փորձի շարժման մեջ դնել նաեւ քրդական գործոնը եւ սաստկացնել ռազմական հարվածները։

ԱՄՆ-Իսրայել տանդեմը այդպես էլ չհասկացավ, որ գործ ունի առնվազն 3000-ամյա պետականություն ունեցող մի երկրի ու ժողովրդի հետ, որը գիտի արժանապատվորեն պահել եւ իրացնել պատմական իր ավանդույթներն ու փորձառությունը։

Ստեղծված անել այս կացությունը բոլորից առաջ հասկանում են թե՛ հրեա եւ թե՛ ամերիկացի ժողովուրդները։ Օրերս Իսրայելում անցկացված հարցախույզի արդյունքները բավական պերճախոս են։ Իսրայելցիների 81 տոկոսը թեեւ համաձայն է Իրանի ռմբակոծմանը, սակայն 59 տոկոսը դեմ է քաղաքականությանը վարչապետ Նեթանյահուի, որի գլխավորած Լիքուդ կուսակցությանը դժվար օրեր են սպասվում առաջիկա ընտրություններին։ Իսկ ինչ վերաբերում է ամերիկացիներին, ըստ ամենավերջին հարցախույզի եւ ըստ անգլիական The Economist շաբաթահանդեսի, հարցվածների միայն 40 տոկոսն է կողմ **Թրամփի** քաղաքականությանը, իսկ 56 տոկոսը՝ դեմ, ընդամենը 4 տոկոս չկողմնորոշվածներով։ Ընդունենք, որ ցածր վարկանիշ է Հանրապետական կուսակցության համար, որը պատրաստվում է կես տարի հետո կայանալիք վճռորոշ ընտրություններին, մինչ դեմոկրատներն օգտվելով առիթից՝ պատրաստվում են մինչ այդ իմփիչմենտի ենթարկել Թրամփին։

Սակայն ամենածանր վիճակը տիրում է Պարսից ծոցի երկրներում, հատկապես այն երկրներում, ուր ամերիկյան ռազմաբազաներ կան, որոնք ամենօրյա ռեժիմով թիրախ են իրանական հրթիռների եւ, միաժամանակ, Հորմուզի նեղուցի ականապատման, փաստացի՝ փակման պատճառով այժմ զրկված են իրենց նավթը արտահանել, անգամ՝ արդյունահանել։

Այդ երկրները ժամանակին, 1991 թ.ին, շատ գոհ էին, որ Քուվեյթի իրաքյան ներխուժումից եւ **Սադդամ Հուսեյնի** զորքերին այդ երկրից դուրս մղելուց հետո, ամերիկացիները ռազմական հզոր հենակետեր ստեղծեցին իրենց երկրներում, որոնք այժմ ռմբակոծվում են մարդկային ու նյութական մեծ կորուստներ պատճառելով։ Ամերիկյան պաշտպանական հովանոցի ներքո նրանք հույս ունեին, որ, մանավանդ 2003-ի իրաքյան պատերազմի եւ Սադդամի չեզոքացումից հետո, տեւական խաղաղության մեջ կշարունակեն հարստանալ, բարգավաճել։ Սակայն շուտով պարզվեց, որ Իրաքի ջախջախումը առավել օգուտ տվեց Իրանին, որն այդպիսով ազատվեց իր արքիթշնամուց...

Այստեղ փակագիծ բացելով ասեմ, որ ես չեմ հիշում ամերիկյան ռազմական որեւէ միջամտություն, որքան էլ հզոր ու տպավորիչ, տեւական խաղաղություն բերի տվյալ երկրին ու ժողովրդին։ Ես հիշում եմ, օրինակ, 1958 թ.ին, լիբանանյան քաղաքացիական առաջին պատերազմին, ամերիկյան 6-րդ հզոր նավատորմի մուտքը Բեյրութի նավահանգիստ եւ ափամերձ ջրեր։ Ծովայինները եկան ու գնացին՝ առանց տեւական խաղաղություն բերելու Իսրայելի ատամների տակ գտնվող այդ փոքրիկ պետությանը։ Միակ օգտվողը հազարավոր այդ ծովայիններից եղան նավահանգստի մերձակայքում գտնվող հասարակաց տների տիրուհիները... Նույնը կրկնվեց 1983 թ.ին, երբ ամերիկյան բազա ստեղծվեց Բեյրութի օդակայանի մոտ, սակայն 2-3 ամիս հետո փակվեց՝ դավադիր պայթյունից հետո, որը խլեց ամերիկացի 230 զինվորների կյանքը։

➩2

## Տեղեկատվական խառնիճաղանջ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ես ամեն օր ստիպված եմ լսել ազգությամբ հայ ռուսամետ, ամերիկամետ, եվրոպամետ, թուրքամետ, եսիմինչամետ մի քանի վերլուծաբանի, հասկանալու համար, թե աջուձախից ինչ լամպ են խոթում մեր աչքերը (Բուլգակով), ամեն կողմից ինչ լապշա են կախում հայ հանրության ականջներին՝ հատկապես Իրանի շուրջ զարգացումների առումով, ու սարսափում եմ այն դոզաներից, որոնցով ապատեղեկատվություն է թափվում թացը չորից տարբերել ձգտող հայերիս վրա։

Գիտեք՝ պատերազմների անհրաժեշտ բաղադրիչը հենց ապատեղեկատվությունն է, դա ավելի գործուն զենք է հաճախ, քան նորագույն շատ զինատեսակներ։ Անգամ պատերազմողները ռազմական ստորաբաժանումներին հավասար հատուկ տեղեկատվական գրոհների խմբեր են ստեղծում՝ հարձակման ժամկետները, ուղղությունները, նպատակներն ու նպատակակետերը քողարկելու եւ հակահարվածները թուլացնելու «դակդիգագան» նահանջ կամ հարձակման անսպասելիություն ապահովելու համար։ Այսինքն՝ պատերազմական կանոններով հենց տեղեկատվական վակուում կամ աղմուկ է ապահովվում՝ բոլորին եւ ամենքին սխալ պատկերացումներ տալու համար, եւ հենց Իրան-Իսրայել-ԱՄՆ հակամարտության օրինակով կարելի է տեսնել դա, այդպես էլ վստահ չլինելով, թե, ասենք, ո՞վ է հարվածել Նախիջեւանին, Ինջիրլիքի ուղղությամբ հրթիռ ո՞ր պետությունը կամ միգուցե հենց Ինջիրլիքի տեր պետությունն է ուղարկել, ո՞վ եւ ի՞նչ նպատակով է հարվածել Իրանում աղջիկների դպրոցին, սադրա՞նք են եղել այդ գործողությունները, թե՞ ոչ, ո՞ր կողմից եւ ի՞նչ հրահրելու նպատակով եւ այլն։

Բայց գոնե Հայաստանի նման երկրում, որ ոտքի տակ է, որին հակամարտության ուզած ելքի դեպքում վտանգները չեն շրջանցելու, տեսականորեն գոնե հանրության գիտակից հատվածը պետք է կարողանար գլուխ հանել կատարվողից, դրա համար ջանացողներ պիտի լինեին։

➩8

## Դիվանագիտական ցուցում՝ Նախիջեւան բառի էթնիկ շեշտադրման վտանգը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Բեռլինում Ադրբեջանի դեսպան **Աղաեւը** մարտի 6-ին X-ում գերմանական ԶԼՄ-ներին ցուցում էր տվել՝« Ադրբեջանի այս հին շրջանի ճիշտ անվանումը Naxջ van (Nachtschiwan) է, ոչ թե Nachitschewan։ Խնդրում եմ գործածել դրա ճշգրիտ անվանումը»։ Նախկինում «բարեկամական» նման հրահանգ հրապարակավ չէր ներկայացրել Բաքվի գրաքննիչը, բայց Իրանից անօդաչուի հարվածը գերմանական, նաեւ համաշխարհային մեդիայում վերնագիր էր դարձրել «Նախիջեւան» հայանուն ձեւը, բանավոր հնչմամբ էլ անընդհատ վերականգնվում էր հնամենի տեղավայրի հայապատկան լինելը, որ Աղաեւին երկյուղ էր պատճառել։ Եթե հավելենք, որ գերմանական մամուլում ԼՂ -ի կողքին Արցախ ձեւի կիրառումը հաճախադեպ է դարձել 2023-ից հետո, («**Ազգ**ում» գրել ենք 2020-ի սեպտեմբերի 27-ից հետո, նաեւ անդրադարձել ենք «Ազգի» 07.11.2025-ի հոդվածում), ուրեմն աշխարհագրական անվամբ էթնիկ շեշտադրման վտանգն է զգում ֆաշիստական երկրի դեսպանը, եւ անհիմն չէ վախը։ Աղաեւի վերադաս սուլթանը՝ ինքնավարություն բառի թշնամին, վերջերս փոխել է Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության սահմանադրությունը, կենտրոնաձիգ իշխանության ձգտումով ուզում է վնասազերծել իր խնամակալությանը հանձնված տարածքը՝ Թուրքիայի եւ Իրանի տնտեսական ազդեցության, նաեւ՝ Հայաստանի հետ ռազմական, իրավապայմանագրային հնարավոր եւ հեռահար ականներից։

***(1990թ. հունվարի 19-ին Հեյդար Ալիեւի ղեկավարած Նախիջեւանի ԻԽՍՀ Գխ նախագահությունը որոշեց, որ «Նախիջեւանի ԻԽՍՀ-ն դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից, դառնում անկախ հանրապետություն»՝ վկայակոչելով Կարսի պայմանագիրը։ ՀՅԴ կառավարությունը Թուրքիայի հետ պայմանագրով Նախիջեւանի տարածքը թողեց երրորդ պետության՝ Ադրբեջանին։ Պայմանագիրն ամրագրվեց Մոսկվայում եւ Կարսում։ 1923-ին Նախիջեւանը ինքնավար միավոր էր, 1924-ին վերակազմվեց Նախիջեւանի ԻԽՀ՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում)։***

«Իրանի դեմ սկսված պատերազմից հետո, Ալիեւի հրահանգով, Նախիջեւանի ինքնավար հանրապետության սահմանադրության նախաբանից հանվել են Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի մասին հիշատակումները՝ ամրագրելով «Նախիջեւանը Ադրբեջանի հանրապետության անկապտելի մասն է» ձեւակերպումը, ֆբ-ում գրել էր **Հրանուշ Խառատյանը**՝ մանրակրկիտ անդրադառնալով խնդրո առարկային, որ տարբեր մասնագետների՝ պատմաբանների, իրավաբանների, քաղաքագետների ուշադրության առանցքում պիտի լինի՝ հետագա հոդվածների նյութ։

Դառնանք Բեռլինում Բաքվի գրաքննիչին։ Աղաեւը հրապարակային որեւէ բան չէր գրել 2024-ի դեկտեմբերին, երբ գերմանագիր երկու հեղինակ Նախիջեւանի մասին հոդված էին հրատարակել՝ հայկականի մասին ակնարկելով։ Հարմար պահը՝ թայմինգը կարեւոր է, հիմա է, բայց մարտի 6-ից հետո էլ գերմանական մեդիան Նախիջեւան բառի մեջ ո՛չ տառ է փոխել, ո՛չ հնչյուն։ Եւ ամենապարադոքսալը՝ «Ազերթաջի» գերմաներենն էլ Նախիջեւան է գրում։

➩5

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Իրանը նոր առաջնորդ է ընտրել

Իրանի Գերագույն առաջնորդի պաշտոնում **Մոջթաբա Խամենեիի** ընտրվելու մասին լուրը անակնկալ չէր: Նրա հնարավոր ընտրության շուրջ պտտվող ենթադրությունները լայն տարածում էին ստացել նույնիսկ հոր մահվանից առաջ: Սակայն Մոջթաբա Խամենեիի սպանված լինելու մասին ենթադրությունները նույնպես երկրում ակտիվ քննարկումների առարկա էին դարձել:

Պատերազմի սկսվելուց չորս օր անց իրանական լրատվամիջոցները վերջապես հավաստեցին, որ Մոջթաբան ողջ է եւ երկրի կարեւոր հարցերի շուրջ խորհրդակցություններ է անցկացնում: Այս տեղեկատվության տարածումից հետո հրապարակվեց նաեւ հաջորդ առաջնորդին ընտրելու նպատակով Բանիմացների խորհրդի հրավիրման մասին ոչ պաշտոնական լուրը, որը հակասական արձագանքների արժանացավ:

Իրանի իշխանական վերնախավի որոշ շրջանակներում Մոջթաբա Խամենեիին անվանեցին «Գերագույն առաջնորդի միակ թեկնածու»: Մյուսները կրտսեր Խամենեիին առաջնորդ ընտրելու պատրաստակամությունը համարեցին «կասկածելի եւ անտրամաբանական» քայլ եւ քննադատեցին նրանց, ովքեր փորձում էին արագացնել նոր առաջնորդի ընտրության գործընթացը:

Իրանական լրատվամիջոցների հաղորդագրությունների համաձայն, Իսլամական Հանրապետության նոր առաջնորդ ընտրելու նիստերը, ըստ երեւույթին, անցկացվել են հեռակա կարգով կամ, անվտանգության նկատառումներից ելնելով, բացակա անդամների ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Ֆարս» լրատվական գործակալությունը, որը մոտ է Իսլամական հեղափոխության Պահապանների կորպուսին, տեղեկացված աղբյուրներին հղում անելով հաղորդեց, որ Բանիմացների խորհրդում բանակցությունները ընթանում են «անվտանգ միջավայրում»՝ ընդգծելով, որ «վերջնական փուլերը ընթացքի մեջ են, եւ նոր առաջնորդի ընտրության արդյունքը կարող է շուտով հրապարակվել»:

«Ֆարս» լրատվական գործակալությունը նաեւ տեղեկացրեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության նոր առաջնորդին ընտրելու համար Բանիմացների խորհրդի վերջնական նիստը կարող է գումարվել խորհրդի անդամների ներկայությամբ՝ **Ալի Խամենեիի** հուղարկավորության արարողությունից հետո:

Բանիմացների խորհրդի նիստերի մասին ենթադրություններին զուգահեռ՝ իրանական եւ արտասահմանյան լրատվամիջոցները հաղորդեցին, որ Բանիմացների խորհրդի գրասենյակը Կոմ քաղաքում ենթարկվել է ԱՄՆ-ի եւ Իսրայելի հրթիռակոծությանը: Սակայն հարձակման հետեւանքով զոհերի կամ վիրավորների մասին տեղեկություններ չեն հրապարակվել:

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության համաձայն, մինչեւ նոր առաջնորդի ընտրությունը երկիրը կառավարում էր Ժամանակավոր ղեկավարության խորհուրդը:

Այժմ ընտրության փաստն արդեն արձանագրվել է, եւ Մոջթաբա Խամենեին տարբեր երկրների ու կազմակերպությունների ղեկավարներից շնորհավորական ուղերձներ է ստանում:

Եմենի «Անսարուլլահ» շարժման առաջնորդ **Սեյյիդ Աբդուլ Մալիք Բադրեդդին ալ-Հուսին** շնորհավորել է Մոջթաբա Խամենեիին Իրանի Գերագույն հոգեւոր առաջնորդ ընտրվելու կապակցությամբ:

Նույն առիթով շնորհավորական ուղերձ է հղել նաեւ Իրաքի վարչապետ **Մոհամմադ Շիա ալ-Սուդանին:**

Մոջթաբա Խամենեիին է փոխանցվել նաեւ Օմանի սուլթան **Հայթամ բին Թարիքի** շնորհավորանքը:

Չի ուշացել նաեւ Ռուսաստանի նախագահ **Վլադիմիր Պուտինի** շնորհավորական ուղերձը:

Մարտի 5-ին Նախիջեւանում տեղի ունեցած անօդաչու թռչող սարքի հարձակումից հետո Իրանի եւ Ադրբեջանի միջեւ առաջացած լարվածության ֆոնին Իրանի նոր առաջնորդին շնորհավորելու առիթը բաց չի թողել նաեւ Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը**:

Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** նույնպես շտապել է այս անգամ լրացնել Իրանի նախկին հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեիի մահվան կապակցությամբ ցավակցելու եռօրյա հապաղումը եւ հայտնվել Իրանի նոր առաջնորդին առաջինը շնորհավորող ղեկավարների շարքում:

Մոջթաբա Խամենեիին շնորհավորողների թվում էր նաեւ Տաջիկստանի նախագահ **Էմոմալի Ռահմոնը**:

Սակայն վստահաբար կարելի է ասել, որ շնորհավորական ուղերձ չի ուղարկի ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը**, որը մինչեւ Մոջթաբա Խամենեիի ընտրվելը հայտարարել էր. «Յուրաքանչյուր ոք, ով կցանկանա դառնալ Իրանի նոր առաջնորդը, կսպանվի»:

Axios-ին տված հարցազրույցում Թրամփը նաեւ բացառել է սպանված Իրանի առաջնորդի որդու՝ 56-ամյա Մոջթաբա Խամենեիի հետ համագործակցության հնարավորությունը եւ ասել. «Նրանք զուր են ժամանակ կորցնում: Խամենեիի որդին թույլ մարդ է»:

Թրամփը նաեւ նշել է, որ Իսլամական Հանրապետության ապագա առաջնորդը պետք է ստանա ի՛ր հավանությունը, հակառակ դեպքում նա երկար չի դիմանա:

Մոջթաբա Խամենեին իշխանությունը ստանձնում է մի ժամանակաշրջանում, երբ երկրի թեոկրատական համակարգը կանգնած է վերջին հինգ տասնամյակների ամենամեծ փորձության առջեւ: 1979 թվականի հեղափոխությունից ի վեր Իրանի երրորդ առաջնորդը իշխանությունը ստանձնում է երկրի պատմության ամենապատասխանատու փուլերից մեկում:

«Ալլահու Աքբար» («Ալլահը մեծ է») բացականչություններով փողոց դուրս եկած կրոնապետական կարգերի բազմահազարանոց կողմնակիցները ողջունեցին կրտսեր Խամենեիի ընտրությունը՝ միաժամանակ ոգեկոչելով «անհավատների» կողմից սպանված ավագ Խամենեիի հիշատակը: Երկրի անվտանգության ուժերը հավատարմության երդում տվեցին՝ «մինչեւ արյան վերջին կաթիլը» ծառայելու իրենց նոր գլխավոր հրամանատարին:

Մոջթաբա Խամենեիի ընտրվելու մասին լուրը հրապարակվելուց անմիջապես հետո մի քանի ժամվա ընթացքում քաղաքական եւ ռազմական կառույցների ղեկավարները շտապեցին իրենց հավատարմությունը հայտնել նոր առաջնորդին:

Իսլամական հեղափոխության Պահապանների կորպուսը ավելի առաջ գնաց՝ ոչ միայն հայտարարելով իր հավատարմության մասին, այլ նաեւ Մոջթաբա Խամենեիին անվանելով «**Իմամ Զամանի փոխանորդ**»՝ մի տիտղոս, որը նախկինում կիրառվել էր նաեւ նրա հոր նկատմամբ: Ըստ ամենայնի, այդ քայլերը կատարվում էին կառավարման համակարգի միասնականությունը ցույց տալու նպատակով:



Ի դեպ, շիա իսլամի գաղափարախոսության մեջ «Իմամ Զամանի փոխանորդ» տիտղոսը տրվում է այն անձին, ով ներկայանում է որպես բացակա իմամի ներկայացուցիչ կամ իրավահաջորդ: Այլ կերպ ասած՝ այդ տիտղոսակիրը պետք է ունենա լիազորություն՝ Իմամ Մահդիի (շիաների տասներկուերորդ իմամ) անունից հանդես գալու կրոնական առաջնորդին վերապահված գործառույթներով:

Զնայած իշխանության հիմքերը ամրապնդելու ուղղությամբ իրականացվող ջանքերին՝ նոր առաջնորդը իր լեգիտիմության հարցում ստիպված է լինելու հաղթահարել լուրջ խոչընդոտներ: Մոջթաբա Խամենեին կրոնական շրջանակներում լայնորեն հայտնի չէ որպես այաթոլլա: Իրանի հեռուստատեսությունը, կարծես, փորձել է պատասխանել այդ հարցին՝ նրան անմիջապես ներկայացնելով «Այաթոլլա Մոջթաբա Խամենեի» տիտղոսով:

37 տարի առաջ, երբ իսլամական հեղափոխությունից հետո առաջին անգամ դրվեց առաջնորդի ընտրության հարցը, երկրի Գերագույն առաջնորդի թեկնածու Ալի Խամենեին կանգնած էր նմանատիպ մարտահրավերի առջեւ:

Սակայն հայր եւ որդի Խամենեիների միջեւ կա մի էական տարբերություն. Ալի Խամենեին գրեթե մեկ տասնամյակ նախագահել է երկիրը եւ հզոր դաշնակիցներ է ունեցել իշխանական վերնախավում: Մոջթաբա Խամենեին, հակառակը, իր քաղաքական կարիերայի մեծ մասն անցկացրել է հանրության աչքից հեռու:

Ավելին՝ Ալի Խամենեիի մերձավոր շրջապատը, այդ թվում՝ ԻՀՊԿ բարձրաստիճան հրամանատարներ, հետախուզության պաշտոնյաներ եւ քաղաքական գործիչներ, կա՛մ սպանվել են 2025 թվականի ամռանը բռնկված 12-օրյա պատերազմի ընթացքում, կա՛մ էլ զոհվել են նախորդ շաբաթվա ավիահարվածների հետեւանքով:

Հիշեցնենք նաեւ, որ Իրանի գերագույն առաջնորդի նստավայրի վրա իրականացված հարձակման ժամանակ Մոջթաբա Խամենեին կորցրել է ոչ միայն հորը, այլ նաեւ մորը՝ **Մանսուրե Խոջաստե Բաղերզադեին**, կնոջը՝ **Զահրա Հադդադ-Ադելին** եւ որդիներից մեկին:

Այլ կերպ ասած՝ այս պատերազմը նաեւ վրեժխնդրության մասին է: Իսկ երբ վրեժխնդրությունը ձեւավորվում է անձնական դրդապատճառներից, առաջինը տուժում է ժողովուրդը:

# Խաբուսիկ խաղաղության սպասելիս

⇨1

Տնտեսական ու քաղաքական ալեկոծումների մեջ է նաեւ Եվրոպան, որը վերջին երկու շաբաթներին անդադրում նիստեր է գումարում լուծելու համար իր անվտանգային ու վառելանյութի դժվարությունները, մանավանդ օտարերկրյա դեսպաններին տուն ուղարկելու վերաբերյալ Կրեմլի որոշումից հետո:

Ստրասբուրգում տեղի ունեցած այդ ժողովում մի քանի շաբաթ առաջ կատաղի ելույթ ունցավ Հունգարիայի վարչապետ **Վիկտոր Օրբանը**, որն իրեն ուղղված կոռուպցիոն մեղադրանքներին ի պատասխան **Ուրսուլա ֆոն դեր Լեյենի** գլխին անցկացրեց, ինչպես ասում են, կոռուպցիոն գործերից հյուսված... վարտիքը:

Երկու օր առաջ նույն ամբիոնից խոսեց նաեւ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը**, որ փոխանակ վտանգալից մեր տարածաշրջանում Հայաստանի դժվարություններին անդրադառնալու, հարմար, տեղին ու կարեւոր համարեց, իր կարծիքով, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին «պատերազմի կուսակցություն» որակելը: Իսկ երեկ, երբ լրագրողներից մեկը, արդեն Երեւանում, հարց տվեց նրան, թե ինչո՞ւ համար է նման բողոք ներկայացրել եվրոպացիներին, պատասխանեց, որ ոչ թե բողոքել, այլ իրավիճակն է ներկայացրել...

Իրավիճակային այս մարդուն պետք է հիշեցնել, որ առաջին անգամը չէ, որ ինքը միջազգային հարթակներում բամբասում, վատաբանում, հեղինակազրկում ու ծիծաղելի է դարձնում մեր երկիրը, պետությունը, ազգային մեր կառույցները:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Իմաստաբանական բառարան

## Ակնոց ընտրելիս

Ակնոցիս ժամկետի ավարտին մնացել էին հաշված շաբաթներ: Դեռ շպրտելուց առաջ պիտի նորը ձեռք բերեի...

Օպտիկայի խանութում տեսականին մեծ էր, եւ դրա համար էլ ստիպված սկսեցի մեկ առ մեկ տնտղել:

Երիտասարդ տարիքում, երբ մասնագիտություն էի ընտրում, ավելի հեշտ կողմնորոշվեցի եւ միանգամից կանգ առա քարտաշի մասնագիտության վրա՝ դառնալով թե՛ արվեստագետ-քանդակագործ, թե՛ բանվոր-շինարար, եւ թե՛ մարզված մկաններով սպորտսմեն:

Հիմա, երբ ընդամենը ակնոց էի փնտրում, ավելի էի խճճվել: Նույնիսկ կյանքի ընկեր ընտրելու ժամանակ այդքան շփոթված չէի:

Ցուցադրված բոլոր ակնոցներն էլ շլացուցիչ էին՝ գեղեցիկ: Ինձ օգնության հասած վաճառողուհուն խնդրեցի չխանգարել ու մեզ հանգիստ թողնել նկատի ունեի ինձ եւ իմ համեստ ճաշակին այնպես, ինչպես մասնագիտություն եւ կյանքի ընկեր ընտրելու ժամանակ մեր միջեւ ոչ մի միջնորդ չկար:

Վերցրեցի առաջին ակնոցը: Նկատեցի, որ խոշորացույց է եւ ամեն ինչ բնականից ավելի մեծ է ցույց տալիս: Մի կողմ դրեցի ու վերցրեցի հերթականը:

Երկրորդը գունավոր էր դրեցի աչքերիս, եւ աշխարհը վարդագույն թվաց: Ինձ դուր եկավ, բայց դրանից էլ հրաժարվեցի, քանի որ ամեն ինչ իդեալականացված էր ցուցադրում՝ ոչ բնական:

Երրորդը հնաոճ էր: Մի տեսակ օգտագործվածի տպավորություն էր թողնում: Դա էլ մի կողմ դրեցի ու աչքս սահեցրի հաջորդ ակնոցների վրա:

Հաջորդը, ճիշտ է, ֆիրմային էր, եւ վրան Made in USA էր գրված, բայց անմիջապես հասկացա, որ դա էլ մեր ավանդական ճաշակի հետ կապ չունի:

Խանութում ցուցադրված էին նաեւ ջրասույզների՝ հավանաբար էքստրեմալ իրավիճակների համար նախատեսված ակնոցներ. դրանք նույնպես ինձ դուր չեկան:

Մեկ ուրիշի վրա էլ գրված էր՝ Made in Belarus: Անմիջապես հասկացա, որ դա էլ իմը լինել չի կարող, եւ վաճառողուհու աչքից հեռու դեն շպրտեցի: Ակնոցներից մի քանիսն էլ նույնի կրկնությունն էին՝ տարբեր մակագրություններով:

Ինձ պատահած հերթական ակնոցն էլ կարծես կլոունի դիմակ լիներ եւ իմ միջավայրին՝ ոչ հարիր: Դա էլ տհաճությամբ մի կողմ դրեցի:

Հանկարծ մի անկյունում հայկական զարդանախշերով երիզված ակնոց նկատեցի, որի վրա գրված էր՝ «Պատրաստված է Հայաստանում»: Թեեւ նշված չէր, թե խոսքը ո՞ր Հայաստանի մասին է, այնուամենայնիվ դրեցի աչքերիս ու զմայլվեցի իմ Հայաստան աշխարհի գեղեցկությամբ:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Թրամփը, իրանյան հրդեհն ու... ՔՊ վերնախավի քարոզարշավը



Հիմա ի՞նչ անենք, չասե՞նք՝ այ Ամերիկա, այ պարոն **Թրամփ**, Իսրայելի իշխանության հետ միացել, նրա թելով թելվել ու նրան թեւ-թիկունք կանգնել՝ այս ի՞նչ ես անում: Երեկ ինքնիշխան Վենեսուելա ներխուժեցիր, նրա օրինական նախագահին ուժայիններիդ բիրտ բլից-գրոհով առեւանգեցիր-տարար, հիմա էլ Իրանի վրա ես Իսրայելիդ հետ հարձակվել, նրա ղեկավարին վերացրիր ու շարունակում ես ա՛յս ինքնիշխան երկրի դեմ ագրեսիան: Դու համաշխարհային ժանդա՞րմ ես, ուժդ եթե պատում է՝ ինչ ուզես կանե՞ս: Իրանը որտե՞ղ, դու որտեղ, ի՞նչ գործ ունես նրա հետ:

Սա՝ ԱՄՆ-ը, այն տերությունը չէ՞, որն ավանդաբար կարծես թե աշխարհի համար ժողովրդավարության օրինակ ու բաստիոն է համարվում: Սա այն Թրամփը չէ՞, որ իր համար խաղաղության Նոբելյան մրցանակ էր գոնե ոչ թե ակնկալում, այլ պահանջում ու հոխորտում: Հետո միջազգային Խաղաղության խորհուրդ ստեղծեց: Նրա բերած խաղաղությունն այսօր Մերձավոր Արեւելքում վառած պատերազմական հրդե՞հն է, որն արդեն իր մեջ է առել տարածաշրջանի առնվազն 12 երկիր ու, Աստված հեռու պահի, նորերին սպառնալուց... Իսկ գուցե այդ «խաղաղության» ու «ժողովրդավարության» ուրույն գլուխգործոցը Իրանի հարավում գտնվող Մինաբ քաղաքի՝ աղջիկների «Շաջարե Թայեբե» տարրական դպրոցի ռմբակոծո՞ւմն էր դասերի ժամանակ, դեռ կյանք չմտած 7-ից 12 տարեկան 168 անմեղ աղջիկ երեխաների կյանքից զրկող... Չհաշված մյուս սպանվածներն ու վիրավորները:

### Իսկ «հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» ուղի՞ն...

Շա՜տ ցանկանք ու աղոթենք, որ այս հրդեհը շուտ մարի՝ առանց անդառնալի հետեւանքների՝ բարեկամ Իրանի, նրա ժողովրդի ու նաեւ մեզ համար: Իսկ դրանից հետո մենք կարո՞ղ ենք հավատալ (որ չհավատանք էլ՝ ի՞նչ անենք) ա՛յս Թրամփին ու մեր Սյունիքով նրա տնօրինմանը հանձնելիք ճանապարհին, դրա անվանը՝ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղությա՜ն եւ բարգավաճմա՜ն»... Մի անցուղի, որը հարեւան ոչ բարեկամ հանրապետությանը, իբրեւ թուրքական դարավոր երազանքի իրականացում, պիտի օգտվելու համար տրամադրվեր ՀՀ-ն Արցախին կապող Բերձորի (Լաչինի) միջանցքի մեզ հանձնելու դիմաց: Մինչդեռ իբր Արցախի հարցի վերաբերյալ շաղլիշելների շողոմ նենգ ժպիտների ներքո կայացած եւ մյուս բոլոր բանակցությունների ու համաձայնությունների միակ թեման ըստ էության եղավ Ադրբեջանին մեր տարածքով Նախիջեւանին կապող ճանապարհ տալու հարցը: Ու ոչ ոք այդպես էլ չասաց՝ սպասեք, որ Բերձորի միջանցք չկա, Արցախն ինքը չկա, էլ ի՞նչ Հայաստանից ճանապարհ: Հիմա, երբ ԱՄՆ-ը երեւի բոլոր դեպքերում էլի մնալու է Իրանին թշնամի, մեր տարածքային ամբողջականությանը գոնե հաստատուն խոսքով միշտ պաշտպան եղած բարեկամ երկիրն ինչպե՞ս կարող է վերաբերվել իր սահմանի կողքին ամերիկյան տեւական ներկայության մեր այդ ծրագրին եւ ուրեմն՝ նաեւ մեզ: Սա՝ մեկ:

Եվ երկրորդ ու երրորդ: Տա Աստված, որ մեր Սյունիքում ամերիկյան տեւական ներկայությունն ինչ-որ տեղ մեզ համար խաղաղության վահանի դեր կատարի: Բայց չենք կարող թեկուզ մասամբ չունենալ, նաեւ, այդպիսի ներկայության հնարավոր ինչ-ինչ անցանկալի հետեւանքների հետ կապված մեկ-երկու այլ մտահոգություն: Սյունիքի ճանապարհի իրական գլխավոր շահառու եւ Ադրբեջանի էլ թիկունք ու հովանավոր Թուրքիան ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի կարեւոր դաշնակիցն է մեր տարածաշրջանում: Իսկ ըստ վերջերս դրսի մամուլում արված որոշ մեկնաբանությունների, այսուհետ Թրամփի հակաիրանական քաղաքականության ծիրում առանձին կարեւոր շեշտադրում կարող է արվել նաեւ Ադրբեջանի վրա: Երկու դեպքում էլ տեսնում ենք շահերի որոշակի համընկնում: Իսկ մեր այդ երկու հարեւանները միշտ կարողանում են ամեն փոքր իսկ ծառայության դիմաց իրենց շահը կորզել:

Մեկ էլ գուցե հարց է նաեւ, թե մեզ ինչպե՞ս «կների» այդ ճանապարհի վերահսկողության իրավունքից սրանով զրկվող Ռուսիան:

### Բայց արած գործերն ու վարքն են, որ պետք է համոզեն

Գեղեցիկ խոսելով ու մարդկանց դրանով գրավելով հնարավոր է գալ իշխանության, եւ այդպես եղել է: Բայց ունեցած իշխանությունը ընտրություններով պահելու որոշիչ արդար միջոցը խոսքերն ու քարոզը չեն, այլ կատարած գործերը եւ իշխանության ընդհանուր վարքն ու վարկը, նրանց ձեռք բերած հեղինակության աստիճանը: Անցած ութ տարիների ընթացքում հանրապետության ներկա կառավարող թիմի արած-չարածի ու դրա հետեւանքների մասին շատ է ասվել, խոսվել, ամեն օր է ասվում, հիմա այդ ամենին չանդրադառնանք: Ակնհայտորեն հունիսի 7-ի մեր համապետական ընտրությունների համատեքստում **Փաշինյանի** կառավարության վերջին շրջանի սոցիալական ձեռնարկները, այդ թվում կենսաթոշակների 10 հազար դրամով ավելացման մտքափոխ, կարծես ոտաց վրա կայացված որոշումը, ինչ-որ թվով քվեներ կավելացնեն իշխող ՔՊ կուսակցությանը: Իսկ օրինակ ինձ՝ ՀՀ քաղաքացի մի ընտրողիս ու երեւի նույն կերպ մտածող որոշակի թվով նաեւ այլոց համար իբրեւ հակառակ ազդեցություն բավական էր թեկուզ միայն փետրվարի 28-ի հայտնի իրավիճակը՝ կապված մեր կողքին, մեր հարեւան Իրանի դեմ սկսված ԱՄՆ-Իսրայել արյունոտ ու վտանգավոր ռազմական ագրեսիայի եւ նույն օրը քպ-ական կառավարող վերնախավի անհասկանալի «ուրախ ավտոբուսի» ու նախընտրական անհոգ քարոզարշավային ուղեւորության հետ: Չմանրանանք, բայց թվում էր՝ գոնե առաջացող տարածաշրջանային հնարավոր վտանգների պայմաններում հենց այդ օրվանից կառավարությունում արտակարգ իրավիճակ պետք է հայտարարված լիներ, գիշերներ չքնեին... Եթե անգամ այս վերջին հարցում սխալվում եմ, ապա մի բան թերեւս հաստատ է, որ նշված դրսեւորումն առնվազն անհարգալից էր հարեւան ու բարեկամ երկրի, նրա ժողովրդի նկատմամբ: Թվում է՝ թե՛ բարոյական, թե՛ անգամ դիվանագիտական կոռեկտության տեսակետից: Ու մի օր նաեւ հիշվում են...

Ղեկավար մարդն էլ կարող է տարբեր բաներ ուտել, նաեւ մարզական վերնազգեստով ճամփորդել, բայց հաստատ՝ ոչ նման պայմաններում եւ ոչ տեսախցիկով նկարելով ու հանրությանը հատուկ ցուցադրելով: Դա, կներեք, բոլորովին էլ գեղեցիկ չէր՝ ինչ նպատակով էլ որ արված լիներ: Ներողություն նաեւ ակամա եկած համեմատության համար, բայց կարելի՞ էր նման իրավիճակում պատկերացնել, ասենք, Կարեն Դեմիրճյանին, Ֆադեյ Սարգսյանին եւ Հրանտ Ոսկանյանին... Անունների այս համեմատությունն իսկ մի տխուր ցուցիչ է այն բանի, թե մենք որտեղից ուր ենք հասել: Անցած 35 տարիների մեր գաղափարական, բարոյահոգեբանական, արժեքային-կողմնորոշչային, դրանից բխող կադրային եւ այլ սրընթաց նահանջների ու այդ ամենից սթափվելո՛ւ անհրաժեշտության ցուցիչ:

## Հայազգի արվեստագետի ցուցահանդեսը Տոկիոյում



Տոկիոյի Գինզա շրջանում գտնվող «Մեզոն Հերմես» ցուցասրահում փետրվարի 20-ից մինչեւ մայիսի 31-ը կգործի «Օբոլ» ցուցահանդեսը: Սա 2022-ին Վենետիկի 59-րդ Բիենալեում Հայաստանը «Ղարիբ» վերնագրված ինստալացիայով ներկայացրած նկարիչ եւ երգահան **Անդրիուս Հարությունյանի** առաջին անհատական ցուցահանդեսն է Ճապոնիայում (նրա հետ մեր հարցազրույցը տե՛ս «**Ազգ**», 2025, փետրվարի 21):

Անդրիուս Հարությունյանը ծնվել է Լիտվայում, 1991 թվականին, հայ-լիտվական ընտանիքում, բնակվում է Նիդեռլանդներում: 2010-2016 թթ. կոմպոզիտորական արվեստ է ուսանել Հաագայի թագավորական կոնսերվատորիայում: 2016-2021 թթ. եղել է Հաագայի Գեղարվեստի թագավորական ակադեմիայի գեղարվեստական հետազոտությունների վարպետության բաժնի հրավիրյալ դասախոս: Վենետիկի բիենալեից բացի մասնակցել է Շանհայի 14-րդ, Գուանճոուի 15-րդ եւ Լիոնի 17-րդ բիենալեներին:

Ըստ ճապոնական www.tokyoartbeat.com կայքէջի՝ Հարությունյանը երաժշտությունը դիտարկում է որպես «խիտ եւ հիպնոսացնող ուժ», «աղավաղված ժամանակի ճարտարապետություն» եւ ուսումնասիրում է ժողովրդական պրակտիկայի, սպեկուլյատիվ ծիսակատարության, քաղաքական համահնչունության եւ ձայնային ներդաշնակության միջեւ եղած կապը: Այս ցուցահանդեսում հյուր-կուրատոր **Իվասա Տոմոյան**, որն ուսումնասիրում է այլընտրանքային կուրատորական պրակտիկաները, կներկայացնի աշխատանքներ, որոնք ուսումնասիրում են ժամանակի, ապագայի եւ առասպելի թեմաները՝ հանդերձյալ աշխարհի ֆուտուրիստական տեսլականի միջոցով: Ա. Բ.

## 2030 տարվա բանտարկություն է սպասվում Էրդողանի մրցակցին

⇨1 Բանն այն է, որ Իմամօղլուն համարվում է **Ռեջեպ Թայիբ Էրդողանի** գլխավոր մրցակիցը նախագահական առաջիկա ընտրություններում: Մի քանի տարի առաջ էր գործող նախագահը նրան պաշտոնազրկել եւ ձերբակալել տվել նույն՝ կոռուպցիոն մեղադրանքով, իսկ այժմ նա դատվում է, ինչպես ասվեց, 400 օգնականների, աշխատակիցների եւ աջակիցների հետ, դատ՝ որը կարող է տեւել տարիներ, ինչը առավել ձեռնտու է Էրդողանի համար. հակառակորդը որքան երկար մնա ճաղերի ետեւում՝ այդքան լավ:



Ահա՛ թե ումից պետք է դաս առնի **Նիկոլ Փաշինյանը**, որը զբաղված է, ի տարբերություն իր բարեկամի, մանրմունր գործերով՝ մի բարեգործ, 3-4 արքեպիսկոպոս, 1-2 իրավաբան, մի քանի սարկավագ-մարկավագ: Այ տղա, սովորիր ուստայից, որին այնքան սիրում-հարգում ես: Սովորիր, թե ինչպես է նա պատրաստվում առաջիկա հոկտեմբերին կայանալիք ընտրություններին, մինչդեռ դու նստել ես անգործ, այն էլ՝ հունիսին մի քանի ամիս մնացած: Փոխանակ պեռաշկի ծամելու, թմբուկ զարնելու, պսակվել-բաժանվելու եւ այլ կապիկություններով զբաղվելու, գո՛րծ արա, առնվազն 50-60 հակառակորդի բռնել տուր, իրավաբանական կարուձեւով գործեր սարքել տուր, նրանց կոխիր պադվալները: Այդ ժամանակ միայն մարդիկ կտեսնեն, թե ինչպես է լինում իսկական արդարադատությունն ու ժողովրդավարությունը: Հ. Ա.

# Ե՞րբ կավարտվի Իրանի դեմ պատերազմը

*(Ըստ արեւմտյան վերլուծական կենտրոնների)*



Մերձավոր Արեւելքում սկսված նոր պատերազմի ավարտը դեռ չի նշմարվում: Այդ անորոշության հետեւանքները կարող են տարիներ շարունակ ազդել տարածաշրջանում ուժերի հավասարակշռության վրա:

Իրանը, ի պատասխան հարվածների, իրականացրել է մի շարք հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարձակումներ տարածաշրջանի տարբեր թիրախների դեմ՝ դրանք ներկայացնելով որպես պատասխան գործողություններ: Այս իրավիճակում փորձագետների առաջ կանգնած կարեւորագույն հարցերից մեկն այն է, թե այս պատերազմը ինչպիսի հետեւանքներ կարող է ունենալ Մերձավոր Արեւելքի համար եւ ինչպիսի սցենարներ կարելի է պատկերացնել Իրանի ներքին զարգացումների ու տարածաշրջանային անվտանգային գործընթացների առումով:

Ամերիկյան RAND վերլուծական կենտրոնի Իսրայելի հարցերով վերլուծաբան **Շայրա Էֆրոնը** իր վերլուծության մեջ ընդգծում է, որ Իսրայելի նպատակն ուղղված չէ միայն Իրանի համակարգի թուլացմանը, այլ նաեւ տարածաշրջանում հակաիսրայելական տրամադրությունների նվազեցմանը:

Միեւնույն ժամանակ Էֆրոնը համոզված է, որ միայն ռազմական ձեռքբերումները չեն կարող Իսրայելին դուրս բերել տարածաշրջանում մշտական լարվածության իրավիճակից: Նրա կարծիքով՝ Լիբանանը կարող է վերածվել հիմնական ճակատի, իսկ Գազայի իրավիճակը շարունակում է պահպանել իր լուրջ բարդությունները: Փորձագետը նաեւ նշում է, որ Իրանի գործողությունների սաստկացումը արաբական հարեւանների դեմ ոչ պաշտոնական կերպով ուժեղացրել է անվտանգության եւ հետախուզական համագործակցությունն Իսրայելի եւ որոշ երկրների միջեւ: Սակայն պաղեստինյան հարցը շարունակում է մնալ տարածաշրջանային քաղաքականության որոշիչ գործոններից մեկը:

RAND-ի ռազմավարության եւ դոկտրինի ծրագրի տնօրեն **Ռաֆայել Քոհենը** ներկայիս պատերազմը գնահատում է որպես Իսրայելի անվտանգության համար շրջադարձային պահ: Նա ընդգծում է, որ նույնիսկ Իրանի համակարգի անկման դեպքում այդ երկրի դաշնակից խմբերը, որոնք հաճախ անվանվում են Իրանի «պրոքսի» ուժեր, իրենց խոր սոցիալական արմատների պատճառով կշարունակեն գործունեությունը: Քոհենը նաեւ զգուշացնում է, որ տարածաշրջանի քաղաքական քարտեզի փոփոխությունը կարող է որոշ արաբական երկրների մղել հակաիսրայելական դիրքորոշման՝ ճգնաժամի մեջ ակամա ներքաշվելու հետեւանքով:

Դիվանագիտության ոլորտում ապագայի ուսումնասիրության տեսանկյունից RAND կենտրոնի փորձագետներ **Ջուլիա Մասթերսոնը** եւ **Քարեն Զուդքամփը** կարծում են, որ լարվածության նվազեցման հստակ ուղի ներկայումս չի նշմարվում: Իրանը եւ Իսրայելն իրենց շահերը կապում են գոյաբանական սպառնալիքների հետ եւ այժմ հիմնականում կենտրոնացած են հակառակ կողմի ռազմական կարողությունների թուլացման վրա: Իսկ **Մոջթաբա Խամենեիի** ընտրությունը որպես Իրանի նոր առաջնորդ նույնպես մեկնաբանվում է որպես միջնորդության հնարավոր ուղիների մերժման ազդակ:

Այլ կերպ ասած՝ RAND-ի վերլուծաբանները նշում են, որ այս ճգնաժամից հետո Իրանը կարող է ունենալ ավելի թուլացած ռազմական կարողություններ, սակայն միաժամանակ՝ ավելի կոշտ եւ հեղափոխական իշխանություն, որը կշարունակի դիմակայել արտաքին ճնշումներին:

Ճգնաժամի երկարաժամկետ ուղղությունը գնահատելու հիմնական ցուցանիշներից մեկը Իրանի հրթիռային հարձակումների ինտենսիվությունն ու շարունակականությունն է: Այդ հարձակումների նվազումը կարող է նշանակել կա՛մ պահեստային զինանոցների պակաս, կա՛մ էլ գիտակցված ռազմավարություն՝ ուժերը պահպանելու երկարատեւ պատերազմի համար: Այդ պատճառով վերլուծաբանները նշում են, որ Մերձավոր Արեւելքի ապագայի վերաբերյալ ցանկացած ճշգրիտ կանխատեսում պահանջում է ռազմական, տնտեսական եւ դիվանագիտական գործոնների մշտադիտարկում առաջիկա շաբաթներին եւ ամիսներին:

1916 թվականին **Ռոբերտ Ս. Բրուքինգսի** կողմից հիմնադրված ամերիկյան Brookings վերլուծական կենտրոնի փորձագետները նույնպես զգուշացնում են, որ այս պատերազմի հետեւանքները դուրս են գալիս Իրանի սահմաններից եւ կարող են կարեւոր ազդեցություն ունենալ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակում:

Brookings-ի արտաքին քաղաքականության ծրագրի տնօրեն **Սյուզան Մալոնին** նշում է, որ թեեւ օդային հարվածները թիրախավորել են Իրանի ռազմական կարողությունները եւ առանցքային ղեկավարությանը, սակայն Իրանի ինստիտուցիոնալ կառույցներն ու քաղաքական ցանցերը դեռեւս զգալի առավելություն ունեն ներքին մարտահրավերների նկատմամբ: Այդ պատճառով Իրանը փորձում է ուժեղացնել հարձակումները հարեւան երկրների էներգետիկ եւ տնտեսական ենթակառուցվածքների դեմ՝ դիվանագիտական ճնշում գործադրելու եւ ԱՄՆ-ի հետ բանակցելու հնարավորությունները մեծացնելու համար:

Brookings-ի արտաքին քաղաքականության ծրագրի ավագ գիտաշխատող եւ Թել Ավիվի համալսարանի պրոֆեսոր **Իթամար Ռաբինովիչը** Իրանի ներկայիս քաղաքականությունը բնութագրում է որպես «ռադիկալ շրջադարձ»: Նրա կարծիքով, չնայած սկզբնական ծանր հարվածներին, Իրանի իշխանությունը դեռ չի տապալվել, եւ նրա ռադիկալ միջուկը շարունակում է վերահսկել իրավիճակը: Պարսից ծոցի երկրներին ուղղված հրթիռային հարվածները եւ Հարավային Կիպրոսը թիրախավորելու փորձերը, ըստ նրա, ցույց են տալիս մի քաղաքականություն, որի նպատակը ԱՄՆ-ին եւ միջազգային հանրությանը համոզելն է, որ պատերազմի շարունակությունը չափազանց թանկ կլինի: Սակայն Ռաբինովիչը զգուշացնում է, որ այս մոտեցումը կարող է նաեւ հակառակ ազդեցությունն ունենալ եւ ստիպել վերանայել արաբական երկրների հարաբերություններն Իրանի հետ:

Brookings-ի Մերձավոր Արեւելքի քաղաքականության կենտրոնի ավագ հետազոտող **Սթիվեն Հեյդեմանը** պատերազմի հիմնական վտանգը համարում է իշխանափոխության վրա խաղադրույքը: Նրա կարծիքով՝ նույնիսկ Իրանի թուլացման դեպքում իշխանությունը կարող է պահպանվել եւ ներքին ճնշումների, զսպման կարողությունների վերականգնման ու ասիմետրիկ գործիքների կիրառման միջոցով նոր խնդիրներ ստեղծել իր հակառակորդների համար:

Բացի այդ, հնարավոր իշխանափոխությունը խաղաղություն հաստատելու փոխարեն կարող է բերել երկարատեւ քաղաքական անկայունության եւ սահմաններից դուրս հակամարտությունների՝ հաշվի առնելով Իրանի միջնորդական ցանցերն ու սոցիալական խոր արմատները տարածաշրջանում:

Brookings-ի փորձագետների գնահատմամբ՝ կարճաժամկետ հեռանկարում ավելի հավանական սցենարը սահմանափակ քաղաքական համաձայնությունն է, այլ ոչ թե լիակատար իշխանափոխությունը: ԱՄՆ նախագահի **Դոնալդ Թրամփը** եւ նրա թիմը, ներքին քաղաքական նկատառումներից ելնելով եւ պատերազմն օր առաջ ավարտին հասցնելու ուղղությամբ ճնշումների պայմաններում, հավանաբար կփորձեն հասնել ինչ-որ համաձայնության Խամենեիի հնարավոր հաջորդի հետ: Միեւնույն ժամանակ Իրանը, պատերազմի սաստկացմամբ, փորձում է դիվանագիտական ճնշում գործադրել՝ բանակցություններում զիջումներ կորզելու նպատակով:

Էմիրությունների քաղաքականության կենտրոնի հիմնադիր եւ նախագահ **Իբթիսամ ալ-Քեթբին** Բելֆեր (Belfer Center for Science and International Affairs) վերլուծական կենտրոնի կայքում հրապարակված իր հոդվածում ընդգծում է, որ Պարսից ծոցի ռազմավարական դերը չափազանց կարեւոր է: Նրա խոսքով՝ Արաբական Միացյալ Էմիրությունների համար հարցն այլեւս միայն անկայունությունից խուսափելը չէ, այլ դրա շրջանակների կառավարումը՝ զսպման կարողությունների ուժեղացման եւ ազգային ինքնիշխանության պաշտպանության միջոցով:

Էներգետիկ տեսանկյունից Հորմուզի նեղուցի շուրջ լարվածությունը անմիջական գլոբալ հետեւանքներ ունի, եւ էներգետիկ անվտանգությունը դարձել է ազգային անվտանգության անբաժանելի մաս:

Նա նշում է, որ պաշտպանական միջոցառումները՝ ներառյալ արտահանման այլընտրանքային ուղիների ստեղծումը, ծովային համակարգման ուժեղացումը եւ գործառնական շարունակականության ապահովումը, միայն պաշտպանական բնույթ չունեն: Դրանք նաեւ ռազմավարական ազդանշան են, որ Ծոցի ենթակառուցվածքները հեշտությամբ խոցելի չեն:

Բացի էներգետիկ անվտանգությունից, առեւտուրն ու հաղորդակցությունները նույնպես կենսական նշանակություն ունեն Էմիրությունների համար: Որպես Ասիայի, Եվրոպայի եւ Աֆրիկայի միջեւ լոգիստիկ եւ վերարտահանման հանգույց՝ երկիրը իր տնտեսական շահերը կապել է տարածաշրջանային տրանսպորտային ուղիների կայունության հետ: Երկարատեւ հակամարտության սրացումը կարող է ազդել ապահովագրության ծախսերի, փոխադրումների երթուղիների եւ արտաքին ներդրումների վրա: Այդ պատճառով միջին կարողությունների տեր երկրները պետք է միաժամանակ պաշտպանեն իրենց տնտեսական ցանցերը համակարգային ցնցումներից եւ դիվանագիտության միջոցով կանխեն առեւտրային ուղիների հետագա ռազմականացումը:

Պատերազմի տնտեսական հետեւանքները նույնպես վերլուծական կենտրոնների ուսումնասիրությունների կարեւոր ուղղություններից են: Ատլանտյան խորհրդի վերլուծական կենտրոնի (EUISS) փորձագետ **Խալեդ Ազիմը** Իրանի պատերազմի նկատմամբ համաշխարհային շուկաների արձագանքի վերաբերյալ իր վերլուծությունում նշում է, որ ֆինանսական շուկաների արձագանքը, նախորդ աշխարհաքաղաքական ճգնաժամերի համեմատությամբ, ավելի վերահսկելի է եղել, սակայն էներգետիկ շուկաների արձագանքը ռազմական զարգացումների նկատմամբ՝ ոչ այնքան զգալի:

Ազիմի խոսքով՝ բնական գազի գների աճը եւ նավթի գնի ժամանակավոր թռիչքը հիմնականում պայմանավորված են եղել Պարսից ծոցի էներգետիկ ենթակառուցվածքների խափանման վտանգի եւ Հորմուզի նեղուցով նավարկության դանդաղեցման վերաբերյալ մտահոգություններով: Այդ նեղուցը շարունակում է համարվել համաշխարհային տնտեսության համար էներգիայի փոխանցման կարեւորագույն ռազմավարական ուղիներից մեկը:

Ազիմը կարծում է, որ շուկաների վարքագծի վրա ամենամեծ ազդեցությունն ունեն երկու գործոն՝ ժամանակը եւ անորոշությունը: Կարճաժամկետ հեռանկարում համաշխարհային տնտեսությունում էներգիայի պահանջարկը ճկուն չէ: Սա նշանակում է, որ նույնիսկ ճգնաժամի պայմաններում էներգիայի սպառումը մեծ փոփոխությունների չի ենթարկվում: Հետեւաբար, եթե էներգիայի մատակարարման խափանումները շարունակվեն, գների բարձրացումը գրեթե անխուսափելի կլինի: Այդ աճը կարող է շղթայական ազդեցություն ունենալ համաշխարհային գնաճի, կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականության, տոկոսադրույքների եւ, վերջապես, տնտեսական աճի վրա:

Այլ կերպ ասած՝ ըստ վերը նշված վերլուծական կենտրոնների, Մերձավոր Արեւելքի ապագան կախված է լինելու ոչ այնքան ռազմական գործողությունների արդյունքից, որքան այս ճգնաժամի կառավարման ձեւերից եւ տարածաշրջանային դերակատարների կարողություններից:

Կազմեց Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

# Դիվանագիտական ցուցում՝ Նախիջեւան բառի էթնիկ շեշտադրման վտանգը

⇨1 2024 թվականի դեկտեմբերի 15-ին գերմանական «Վելթը» վերնագրել էր՝ «Հիշեցնում է Մաչու Պիչուն, բայց 1000 տարով ավելի հին է»: Հեղինակ Բեթթինա Զայփփի *(Bettina Seipp)* հոդվածի սկզբում լուսանկարին կից մակագրություն կա՝ «Հայերը կովկասյան Ալինջագալա ամրոցի (Երնջակաբերդի հիմնաքարը- Ան. Հ.) դրել են մ.թ. 4-րդ դարում»: «1600 աստիճան է տանում դեպի Նախիջեւանի այդ ամրոցը, որ հիշեցնում է Պերուի հայտնի ավերված քաղաքը: Ադրբեջանի էքսկլավը զարմացնում է նաեւ այլ անսովոր առանձնահատկություններով՝ եթե Նախիջեւան ես եկել իբրեւ զբոսաշրջիկ, մեծ մասամբ անտեղյակ կմնաս դրա հակամարտություններով լի փոթորկալից պատմությանը: Անդրկովկասի Շվեյցարիա են անվանում այս տեղանքը, որի ամենաբարձր (3904 մ) գագաթը Կապուտջուղն է (գերմաներեն տեքստում՝ `Kaputdschugh):Նախիջեւանում ադրբեջանցիները առանձնահատուկ խնամում են մշակութային ժառանգության այն մասը, որը թյուրքական ժողովուրդների հետ կապ ունի: Նրանցից մի քանիսը 11-րդ դարում Կենտրոնական Ասիայից գաղթել են Կովկաս, պայքարել հիմնականում տեղում վաղուց հաստատված հայերի հետ՝ գերիշխանության համար: Նախիջեւանում 400,000 բնակիչների մեջ այլեւս հայեր չկան, նրանք 19-րդ դարում կազմում էին բնակչության 40 տոկոսը: Նոյ նահապետին վերագրվող՝ աշխարհում հայտնի 4 դամբարանների մեջ Նախիջեւանում գտնվողը բառացիորեն առանձնահատուկ դիրք է զբաղեցնում: Եթե նախիջեւանցիների պնդումը ճիշտ է, թե փայտե մեծ նավակը խրվել է 2415 մետր բարձրությամբ Իլանդաղ (Օձասար, Վիշապասար- Ան.Հ.) լեռան գագաթին: Եվ նույնիսկ եթե Նոյն իրոք այստեղ է դրել ցամաքի՝ ժամանակակից Թուրքիայի տարածքում գտնվող Արարատ լեռան վրա, Ադրբեջանի զբոսաշրջության պաշտոնյաները պնդում են, որ մարգարեն եւ նրա ընտանիքը հետագայում ապրել են Նախիջեւանում: Նրանք երկրի անվանումը կապում են հին պարսկերեն բառերի հետ՝ Նախ՝ Նոյ եւ Չիվան՝ վայր, հետեւաբար՝ «Նոյի վայր»: Հնարավոր է նաեւ, որ Նախիջեւան բառը ծագել է հայերեն՝ «վայրէջքի վայր» բառերից: Բոլոր հայկական եկեղեցիները քանդվել են Նախիջեւանում: Հայաստական 89 եկեղեցի, ըստ երեւույթին, վերաօգտագործվել կամ քանդվել է վերջին 30 տարիների ընթացքում: Պատմաբան **Արգամ Այվազյանը**, փաստաթղթավորել է Նախիջեւանի քրիստոնեական պատմամշակութային բոլոր վայրերը՝ 1964-1987 -ին: 2008 -ին հրատարակված «Նախիջեւանի հուշարձանների հանրագիտարանն» այլեւս ոչ մի եկեղեցի չի թվարկում: Ագուլիսում (այժմ՝ Այլիս) 12 եկեղեցի կար. այսօր միայն մզկիթներ են մնացել»:



*Երնջակաբերդի լուսանկարը՝ «Վելթի»:*

Նկատելի է, որ «Վելթը» նախապատվություն է տվել հայկական անվանաձեւերի կիրառմանը: Թերթը գրում է, թե «Նախիջեւանն իր մեկուսացված դիրքը վերածել է առավելության, լիովին ինքնաբավ է, եւ դա է պատճառը, որ BBC-ին գնահատել է`որպես «Աշխարհի ամենակայուն վայրերից մեկը»: Հացահատիկ, միրգ, բանջարեղեն, միս, ձուկ, գարեջուր, գինի ինքնուրույն է արտադրում՝ առանց թունաքիմիկատների, կենտրոնանալով օրգանական սննդի վրա»: Որքան էլ արտառոց հնչի, սակայն ըստ «Վելթի»՝ սննդի մշտական մատակարարումն ապահովագրում է՝ «եթե Հայաստանը կրկին մեկուսացնի տարածաշրջանը երկրի մնացած մասից, ինչպես դա արեց ԽՍՀՄ փլուզումից հետո»:

*Նախիջեւանի մասին հաջորդ հոդվածը՝ «**Ազգի**» առաջիկա համարում:*

# Լույս է տեսել Գերմաներեն-հայերեն իրավաբանական բառարան

Համբուրգի՝ գիտական Dr. Kovac մասնագիտացված հրատարակչությունը օրերս լույս է ընծայել Գերմանահայ իրավաբանների միության հեղինակած Գերմաներեն-հայերեն իրավաբանական բառարանը, որն ընդգրկում է 10 000 բառեզր:

**Գուրգեն Պետրոսյանի, Քրիստիան (Խաչատուր) Մխիթարյանի** գլխավորած աշխատանքային խումբը համալրել են **Արաքսյա Առաքելյանը, Անիտա Գրիգորյանը, Համիկ Գրիգորյանը, Արփի Գույումճեանը, Հովիկ Մարտիրոսյանը**:

Հատորն ընդգրկում է՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» հատված՝ հայերեն, գերմաներեն թարգմանությամբ, նախաբան, Գերմանիայի եւ Հայաստանի իրավակարգերի մասին համառոտ ակնարկ, հապավում- համառոտագրություններ, լատիներեն-գերմաներեն-հայերեն բառեզրեր, հեղինակների մասին կենսագրական համառոտ տեղեկատվություն:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**



# Ի՞նչ է որոնում Փաշազադեն Վատիկանի առաքելական գրադարանում

Կովկասի մահմեդականների գրասենյակը, Վատիկանում Ադրբեջանի դեսպանությունը մարտի 9-ին Հռոմում Միջկրոնական համերաշխության իֆտարի ընթրիք են կազմակերպել՝ Վատիկանում Մարոկկոյի դեսպանության և Միջազգային մեդիա հաղորդակցության ակումբի աջակցությամբ: Սուրբ Աթոռը ներկայացրել է պետքարտուղար կարդինալ **Պարոլինը**: Իֆտարին **Փաշազադեի** հետ Ադրբեջանից ներկա են եղել կաթոլիկ եկեղեցու, ալբանաուդի քրիստոնեական համայնքի նախագահ **Ռոբերտ Մոբիլին**, Բաքվի եվրոպական հրեական համայնքի նախագահ **Շարովսկին**, այլք: «Վատիկան նյուզի» ադրբեջանական տարբերակում, «Ազերթաջում» սույնը լրացվել է նաեւ հետեւյալ տեղեկատվությամբ՝ Փաշազադեն այցելել է 1475 -ին հիմնադրված Վատիկանի առաքելական գրադարան: Ի՞նչ է որոնում Փաշազադեն փաստաթղթերով հարուստ գրադարանում, որ հասանելի է միայն մասնագետ հետազոտողների համար:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**
**Լուսանկարը՝ «Ազերթաջի»**

# Լույս ու ստվեր խորագրով լուսանկարչական ցուցահանդես ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետում

Օրերս Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետում տեղի ունեցավ «Լույս ու ստվեր» խորագրով ցուցահանդեսի ամփոփումը: Կարեւորվեց լուսանկարչության դերը եւ լուսանկարչի էթիկան արդի ժամանակներում: Բացման խոսքով հանդես եկավ ցուցահանդեսի կազմակերպիչներից, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության եւ ՍՄԳ ամբիոնի վարիչ **Ռուբեն Երզնկյանը** խոսելով ցուցահանդեսի մասին: Ցուցահանդեսի կազմակերպիչներից, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության ,գեղարվեստական լուսանկարչության եւ ՍՄԳ ամբիոնի ասիստենտ **Արմեն Խաչատրյանը** հիմնավորեց սիստեմավորված դասավանդման գործոնը մասնագիտացված լուսանկարիչ պատրաստելու գործի կարեւորությունը:



«Լույս ու ստվեր» խորագրով ցուցահանդեսում ներկայացված են 34 ուսանողների եւ շրջանավարտների 120 տպագրված աշխատանքներ:Ռուբեն Երզինկյանը հավելեց,որ սա ամբիոնում կատարված աշխատանքի ամփոփումն է: Ցուցահանդեսն ունի նաեւ էլեկտրոնային տարբերակ ներկայացված ASPU Photo gallery-ում, որտեղ ներկայացված են նույն հեղինակների 150-ից ավել լուսանկար: Էլեկտրոնային հարթակի վրա՝ ՀՊՄՀ շրջանավարտ Արամ Խաչատրյանի ջանքերով: ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դեկան **Գեւորգ Թադեւոսյանը** ողջույնի խոսք ուղղեց ցուցահանդեսի կազմակերպիչներին Ռուբեն Երզինկյանին եւ Արմեն Խաչատրյանին: Ֆակուլտետի կողմից շնորհակալագրեր ստացան ցուցահանդեսի կազմակերպիչներն ու մասնակիցները:

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի վարիչ, կոմպոզիտոր **Արա Գեւորգյանը** կարեւորեց լուսանկարչության արտահայտչամիջոցները ու կարողությունը անմահացնելու մեր քաղաքի պատմությունը:

Ցուցահանդեսին հրավիրված էին Երեւանի տարածաշրջանային թիվ 1 քոլեջի լուսանկարչական գործ մասնագիտությամբ սովորող ուսանողները, որոնց համար ամբիոնը կազմակերպում է վարպետաց դասեր: Առաջարկվեց համատեղ լուսանկարչական ցուցահանդեսներ անցկացնել Երեւանի տարածաշրջանային թիվ 1 եւ Շառլ Ազնավուրի անվան արվեստի եւ մշակույթի պետական քոլեջների հետ:

Միջոցառման ընթացքում ելույթ ունեցան գեղարվեստական լուսանկարչություն բաժնի 1-ին եւ 4-րդ կուրսի ուսանողները, ծնողները: Բոլոր նման միջոցառումները միտված են գեղարվեստական լուսանկարչությունը ծառայեցնելու իրական նպատակին, բարձրացնելով գեղարվեստական ճաշակն ու գեղեցիկի ընկալումը:

Լույս ու ստվեր խորագրով լուսանկարչական ցուցահանդեսի

QR կոդ

# Կիբեռպատերազմ Իրանի դեմ

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ
Անվտանգության հարցերով փորձագետ

## 2026թ փետրվարի 28-ին իսրայելա-ամերիկյան հարձակումների ժամանակ զոհված իրանցի քաղաքական եւ ռազմական գործիչները


*Ալի Խամենեյի -* Իրանի քաղաքական եւ կրոնական առաջնորդ 1989-2026թթ.:


*Աբդոլռահիմ Մուսավի,* գեներալ-մայոր - Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Իրանի Իսլամական Հանրապետության բանակի գերագույն հրամանատար:


*Մոհամադ Պաքպուր -* Իսլամական Հեղափոխության Պահապանների Կորպուսի (ԻՀՊԿ, IRGC) հրամանատար, բրիգադի գեներալ:


*Ազիզ Նասիրզադե -* Իրանի պաշտպանության նախարար:


*Ալի Շամխանի -* Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար, Իրանի գերագույն առաջնորդի քաղաքական խորհրդական:

ԱՄՆ-ի եւ Իսրայելի հարձակումը Իրանի վրա մեկ անգամ եւս ցուցադրեց կիբեռգործողությունների կարեւորությունը ռազմական գործողությունների սկզբում եւ ընթացքում: Շնորհիվ այդ գործողությունների, կարճատեւ ժամանակահատվածում կարելի է նշանակալի ազդեցություն ունենալ ռազմական գործողությունների սկզբում:

Հայտնի է, որ Վենեսուելայի նախագահի **Նիկոլաս Մադուրոյի** առեւանգման ժամանակ ԱՄՆ-ի հատուկ ջոկատայինները կիբեռգործառույթի շնորհիվ անջատել էին նախագահի ռեզիդենցիայի եւ շրջապատի էլեկտրականությունը:

Իրանի դեմ վերջին ռազմական գործողությունները սկսելուց առաջ (2026թ. փետրվարի 28) նույնպես իրականացվեց համակարգված տիեզերական եւ կիբեռգործողություններ, որոնք շատ արագ ու արդյունավետ ազդեցություն ունեցան Իրանի կապի եւ սենսորային ցանցերի աշխատանքի խափանման ուղղությամբ: Դա զրկեց իրանական հատուկ ծառայություններին եւ պաշտպանական համակարգերին տեսնելու, համագործակցելու եւ ընհանրապես արդյունավետ արձագանքելու հնարավորություններից: Համենայնդեպս այդպես հայտարարեց ԱՄՆ-ի Շտաբերի պետերի Համատեղ կոմիտեի նախագահի՝ գեներալ **Դեն Քեյնը**:

Իհարկե, սա կարծես թե նորություն է ռազմական գործողությունների ծրագրում, սակայն հայտնի է, որ անցյալ տարի հունիս ամսին, ամերիկյան հրամանատարությունը նույն այս գործողություններով կուրացրեց Իրանական Հակաօդային պաշտպանությունը (ՀՕՊ) եւ հարվածեց միջուկային օբյեկտներին: Չնայած, որեւէ ապացույցներ չկան, որ Իրանի միջուկային ծրագիրը խափանված է:

Ամեն դեպքում այս կիբեռգործառույթների շնորհիվ հաջողվեց ֆիզիկական լիկվիդացիայի ենթարկել Իրանի հոգեւոր առաջնորդ **Ալի Խամենեին** եւ մի շարք ռազմաքաղաքական հրամանատարների ու ղեկավարների: Ամերիկա-Իսրայելական հետախուզություններին հայտնի էր դարձել, որ շաբաթ օրը՝ փետրվարի 28-ին (2026թ.), երկրի հոգեւոր առաջնորդը իր ռեզիդենցիայում ընդունելու էր պետության ռազմա-քաղաքական մի խումբ ղեկավարների:

ԱՄՆ-ի «Financial Times» լրագիրը հայտնում է, որ ԿՀՎ-ին եւ Մոսադին (ամերիկյան եւ իսրայելական հետախուզությունները) հայտնի էր դարձել, որ այդ հանդիպումը կայանալու է: Ինչպե՞ս էր ձեռք բերվել այդ տեղեկատվությունը: Նրանց հաջողվել էր իրական ժամանակահատվածում թափանցել (CCTV) փակ միացման փողոցային տեսախցիկներ, ինչպես նաեւ բջջային կապի համացանց եւ հայտնաբերել կոնկրետ հանդիպման վայրն ու ժամանակը: Թեհրանի տեսախցիկներից մեկը ցույց էր տվել, թե որտեղ են ավտոկայանել Իրանի բարձրագույն ղեկավարության մեքենաները՝ վարորդներով եւ թիկնապահներով:

Իհարկե, տեխնիկական ներթափանցման նման հնարավորություն չէր կարող ստեղծվել մի քանի օրում, մի քանի ամսում, նույնիսկ տարում: Դա երկարատեւ, համառ, նպատակաուղղված եւ ահավոր ծախսատար աշխատանքի արդյունք է: Սա ծավալային հետախուզական ճարտարապետության արդյունք է (comprehensive intelligence architecture - всеобъемлющая разведывательная архитектура):

Այս «ճարտարապետության» մեջ օգտագործվել են հզոր ռադիոէլեկտրոնային հետախուզություն, կիբեռլրտեսական ցանցեր եւ իհարկե ոչ նվազ կարեւոր՝ գործակալական ցանցը:

Դժվար է կռահել, թե ինչո՞ւ այդ հանդիպման համար չի օգտագործվել որեւէ խորը ապաստարան կամ ստորգետնյա բունկեր:

Հայտնի է նաեւ, որ անցած տարվա հունիսյան 12-օրյա պատերազմից հետո իրանական հակահետախուզությունը ձերբակալել էր երկրի ներսում մարդկանց մեծաթիվ զանգված, որոնց կասկածում էին Իսրայելի եւ ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների հետ համագործակցելու մեջ (տեղեկատվություն կար, որ անգամ որոշ իրանական քաղաքացիներ հավաքագրվել էին Երեւանում՝ Կասկադի սրճարաններից մեկում): Սակայն, պարզվում է, որ այդ ցանցը դեռեւս ամբողջովին բացահայտված չէր: Ինչպես ասում են, կար նաեւ հատուկ ժամանակաշրջանի գործակալական ցանց (агентурная сеть на особый период):

Միեւնույն ժամանակ, ակտիվորեն աշխատեց նաեւ գաղափարա-տեղեկատվական պատերազմը:

Գոյություն ունի իրանական «Baade Sabaa» (Յոթից հետո) աղոթքի հավելվածը, որով կոչեր ուղարկվեցին պայքարել գործող կրոնական ռեժիմի դեմ:

«Օգնությունը եկավ» կամ «Մեր իրանական եղբայրների եւ քույրերի ազատության համար դիմում ենք բոլոր ճնշող ուժերին, վայր դրեք զենքերը եւ միացեք ազատարար ուժերին: Միայն այդպես կարող եք փրկել ձեր կյանքերը»:

Ի՞նչն է հետաքրքրականը: Այդ ուղերձը տարածվել է աղոթքի ժամին: Հայտնի չէ, իհարկե զենքը վայր դնողներ եղե՞լ են, թե՞ ոչ, եւ եթե եղել են՝ ի՞նչ քանակությամբ: Բայց եթե այդ թիվը հասել է նույնիսկ մի քանի հարյուրի, ապա կարելի է սա համարել Իսրայելի հետախուզության թեթեւ հաջողություն:

Հարձակումը սկսվելուց 4 ժամ հետո (փետրվարի 28-ին) Իրանի իշխանությունները արգելափակեցին համացանցը: Դա ռեժիմի ստանդարտ արձագանքն էր նման պայմաններում:

Անկասկած, վերը նշված գործողություններում մեծ դեր է խաղացել արհեստական բանականությունը (artificial intelligence «AI» - искусственный интеллект «ИИ»), որի օգնությանը իհարկե դիմել են չարամիտ ուժերը: Եվ իհարկե, նման ուժերի եւ գործողությունների դեմ պետք է ապահովել հիմնական անվտանգությունը՝ կենտրոնանալով բազմագործոն նույնականացման հիմունքների դեմ (многофакторная аутентификация «МФА» - multifactor authentification MFA ), պայքար ֆիշինգի (fishing) վարկաբեկված հաշվառումների դեմ:

Որպեսզի ընթերցողիս պարզ լինի, կարճ բացատրեմ. պայքար կեղծ հաշվառումների, ուրիշի անձնական տվյալների յուրացման եւ օգտագործման դեմ, որը այսօր կիբեռհանցագործություններում շատ ընդունված եւ տարածված բան է (այդ թվում եւ բանկային գործարքներում եւ տարբեր սպառնալիքների լանդշաֆթում):

Եվ ընդհանրապես հատուկ ծառայությունները (այդ թվում եւ ՀՀ ԱԱԾ-ն) պետք է պարտադիր ստեղծեն հիմունքներ, որոնց միջոցով կարող են պայքարել տարբեր լեզուներով ստեղծված «գրագետ հաղորդագրությունների» դեմ:

***

Իրանի Իսլամական Հանրապետությունն ունի 16 հատուկ ծառայություններ եւ ուժային կառույցներ, սակայն ընդամենը 3 հիմնական հետախուզական կազմակերպություններ՝ (Mois) - Տեղեկատվության եւ անվտանգության նախարարություն, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզությունը (разведка КСИР) եւ առանձին, բարդ հետախուզական գործառույթներ անցկացնելու համար (այդ թվում՝ ֆիզիկական լիկվիդացիա) 1990 թ. հիմնված է «Ալ-Քուդս» կազմակերպությունը:

Աշխարհի բոլոր հետախուզություններն օգտագործում են «դիվանագիտական ծածկը» «թիրախ երկրի» նկատմամբ հետախուզական տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով: Ինչո՞ւ է այս ծածկը օգտագործվում բոլոր պետությունների կողմից եւ ամենաշատը: Մի պարզ պատճառով; «դիվանագիտական ծածկի» տակ գործող հետախույզի բացահայտման դեպքում, մաքսիմում ինչ նրան սպառնում է, դա «Պերսոնա նոն գրատա» սցենարն է, այսինքն, այդ պետությունից տվյալ դիվանագետի արտաքսումը: Չնայած այսօրվա քաոսային աշխարհում, որտեղ միջազգային ոչ մի օրենք չի գործում, դիվանագետը կարող է «պատահաբար» հարբած վարորդի մեքենայի տակ ընկնել կամ ռեստորանում թունավորվել կամ որեւէ ցուցարարի ոտքի տակ ընկնել (ցույցը նկարահանելիս), կամ պարզապես անհետ կորչել:

Նաեւ նշեմ, որ այսօրվա քաոսային աշխարհում լիովին ուսումնասիրված չեն հետախուզական գործառույթների, ահաբեկչական ակտերի, առանձին քաղաքական գործիչների սպանությունների պրոցեսները: Եվ այս ակտերը շատ դեպքերում չեն բացահայտվում, եթե դրա «ցանկությունը չկա»:

⇨7

# Ադրբեջանը կելնի՞ Իրանի դեմ

ԱՄՆ-իսրայելյան ռազմական ագրեսիային դիմակայող Իրանի տարածքից մարտի 5-ին Նախիջեւանի վրա երկու անօդաչու թռչող սարքերի հարձակումից հետո Ադրբեջանի նախագահը հարեւան երկրի հասցեին կտրուկ հայտարարությամբ հանդես եկավ։ Նա միաժամանակ հավաստիացրեց, որ իրենք չեն մասնակցի ընդդեմ Իրանի գործողություններին եւ իր երկրի տարածքը չի օգտագործվի հարեւան որեւէ երկրի դեմ։ Բայց ինչպիսի՞ն կլինի նրանց արձագանքը, եթե Իրանը չկարողանա դիմակայել ԱՄՆ-ի եւ Իսրայելի ագրեսիային։ Եվ ինչո՞ւ են Իրանում համարում, որ Ադրբեջանին հարվածը իսրայելյան սադրանք է։

Մարտի 6-ին նման հարցադրումով հանդես եկած ռուսական «Մոսկովսկի կոմսոմոլեց»-ը, նաեւ նկատի ունենալով Իրանում արագ հաջողության հասնելու **Թրամփի** պլանի ձախողումը, գրել է, թե այս վերջինի պատճառով սկսվել են Իրանում իրավիճակն անկայունացնելու ուղիների որոնումներ՝ ծայրահեղ ազգայնական կազմակերպություններին ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմը ներգրավելու միջոցով։ Այդպիսիների մեջ, ըստ հրապարակման, գլխավոր ուժը քրդական ռազմաքաղաքական կազմակերպություն, Իրանում քրդերի ինքնորոշման, մշակութային ու քաղաքական իրավունքների օգտին հանդես եկող «Քրդստանի ազատ կյանքի կուսակցությունն» է (PJAK)՝ Թուրքիայի Քրդստանի բանվորական կուսակցության լրիվ նմանակը։ Բայց բոլորովին վերջերս ամերիկացիներն առանց խղճի խայթ զգալու դավաճանել են **Բաշար Ասադի** դեմ պայքարում տարիների իրենց ամենահավատարիմ ու հետեւողական դաշնակից սիրիացի քրդերին։ Ուստի իրանցի քրդերը դժվար թե չմտաբերեն այն հայտնի ճշմարտությունը, ըստ որի «ամերիկացիներին թշնամի լինելը վտանգավոր է, բայց բարեկամ ու դաշնակից լինելը՝ մահացու»։ Այդ գիտակցմամբ ամերիկացիներն ու իսրայելցիները փորձելու են իրենց կողմը քաշել էլի ինչ-որ մեկին։

Եվ այստեղ, գրում է կայքը, որպես նրանց համար առավել հարմար խաղացող ուրվագծվում է Ադրբեջանի կերպարը։ Իհարկե, նրան իրենց կողմից բացահայտ հանդես գալու հարցում ընդգրկելը հեշտ չի լինի։ Այլ բան է, երբ ադրբեջանական բանակը, համալրված թուրքական եւ իսրայելական անօդաչուներով, վարձկաններ ներգրաված լինելով եւ ղեկավարվելով թուրք զինվորական խորհրդատուներով, կարողացավ Ղարաբաղում արագ հաղթել քանակով մի քանի անգամ պակաս աշխարհազորային, ոչ մեկի աջակցությունը չստացած, 20-րդ դարի երկրորդ երրորդի զենքով կռվող քրիստոնյա հայերին։ Բայց այստեղ Իրանն է՝ իսլամական արմատականության երկիր, որն այժմ կռվում է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ իսլամական աշխարհում, մեղմ ասած, համակրանք չվայելող Իսրայելի դեմ։ Իսլամական աշխարհը դրան ինչպե՞ս կնայի։



Նախիջեւանի միջադեպի հետ կապված **Ալիեւի** հոխորտանքներն ավելի շատ ներքին լսարանի համար էին, կարծում է լրատվամիջոցը, բայց ի՞նչ կլինի, եթե Իրանը չկարողանա դիմակայել իրենից ուժեղ թշնամուն եւ այնուամենայնիվ փլուզվի։ Կդիմանա՞ Ալիեւը Թուրքիայի ակտիվ ռազմական օգնությամբ, առնվազն 20 միլիոն իրանցի ադրբեջանցի բնակչությամբ Հյուսիսային Իրանը գրավելու գայթակղությանը։ Մանավանդ որ այդ հարցում շատ շահագրգռված կլինեն «Մեծ Թուրանի» գաղափարն առաջ տանող թուրքական ազգայնամոլական շրջանակները։ Նրանց համար երազանք չէ՞ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ լայն ցամաքային միջանցք ունենալը։ Այնպես որ, ամեն ինչ կախված կլինի նրանից, թե ինչպես կդասավորվեն իրադարձությունները մերձավորարեւելյան այս պատերազմի ընթացքում, եզրափակում է պարբերականը։

Այս հրապարակման հաջորդ օրը խնդրի հետ կապված ավելի կատեգորիկ պնդումով ու հարցադրումով հոդվածով է հանդես եկել «Սվոբոդնայա Պրեսսա» ցանցային հրատարակությունը, ինչպես եւ ՌԴ երկու այլ լրատվամիջոցներ։ Հոդվածի բովանդակությունը կարճ՝ մասնավորապես հետեւյալն է։ Բացի մինչ այս էլ Ադրբեջան-Իրան հարաբերություններում առկա որոշակի լուռ լարվածությունից, կապված Իրանական Ադրբեջանի նկատմամբ Բաքվի «ոչ անտարբերության», իսկ Արցախի գրավումից հետո այնտեղ իսրայելական ծառայությունների գործողությունների բազայի հնարավոր ընդլայնման Իրանի անհանգստության հետ, կա եւս մեկ հանգամանք։ Երբ ԱՄՆ-ը մի ծառայություն է մատուցում, մի բանում օգնում է, դրա դիմաց՝ ինչ-որ բան պահանջում։ Ռուսական կայքը առանց չակերտների խոսում է Ադրբեջանի համար այնքան կարեւոր, այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» մասին, որի ծրագրի՝ Թրամփի միջոցով համաձայնեցմամբ Բաքուն ու Երեւանը հայտնվել են ԱՄՆ-ից «ծայրահեղ կախվածության» վիճակում։ Առավել չափով՝ Իսրայելի լավագույն բարեկամ Ադրբեջանը, որի համար այդ ծրագրի հարցում ԱՄՆ-ին կարող էր քաղաքավարի խնդրած լինել նաեւ նույն այդ Իսրայելը։ Եվ հարկ եղած դեպքում եթե անգամ Ալիեւը ինչ-ինչ հիմնավոր զգուշավորություններից ելնելով չցանկանա, ձգձգի Իրանի դեմ դուրս գալը, ԱՄՆ-ը նրան գուցե կարող է եւ ստիպել։ Հոդվածագրի գնահատմամբ, գրոհի արդյունավետ միջոց կարող է լինել Նախիջեւանում ուժեղ խմբավորման ստեղծումը, որի համար ադրբեջանական զորքն այնտեղ պետք է հասնի մեր Սյունիքի ճանապարհով, ԱՄՆ-ի տված երաշխիքով։

«Եվ այստեղ պարզ է դառնում **Ջ.Դ. Վենսի** փետրվարյան անսպասելի այցի պատճառը,- ասվում է հոդվածում։- Ըստ երեւույթին, ամերիկացի փոխնախագահը **Նիկոլ Փաշինյանին** փոխանցել է, թե նա ինչ պետք է անի։ Եվ ամենայն հավանականությամբ վերջինիս զգուշացրել է՝ չմտածված գործողություններ չանել»։

Իսկ առայժմ, ինչպես հայտնի է, Իրանի եւ Ադրբեջանի նախագահների հեռախոսային խոսակցությունից հետո Բաքուն «հետընթաց է տվել»։ Բացել է Իրանի հետ սահմանը բեռնատար տրանսպորտի համար, շնորհավորել է երկրի ընտրված նոր հոգեւոր առաջնորդին եւ անգամ 25 տոննա մարդասիրական օգնություն է ուղարկել Իրան։ Այս թեմային եւս ծավալուն անդրադարձներ կան ռուսական ԶԼՄ-ներում։

**Գ. Ս.**

# Կիբեռպատերազմ Իրանի դեմ

⇨6 Կարծում եմ բոլորիս համար ակնհայտ է, որ ԱՄՆ-ին որեւէ ուղղակի սպառնալիք Իրանի կողմից չկար եւ մոտակա ժամանակներում չէր էլ կարող լինել։ Հասկանալի է, որ համաշխարհային պատերազմների, մինչեւ անգամ «Մրրիկը անապատում» («Буря в пустыне») ռազմական գործողությունների ետեւում չկար եւ մոտ ժամանակներս չի լինի որեւէ ուղղակի սպառնալիք ԱՄՆ-ի տարածքին եւ այնտեղ ապրող բնակչությանը։ ԱՄՆ-ի կողմից իրականացվող բոլոր ռազմական գործողությունների եւ հատուկ գործողությունների հիմքում ընկած են ավելի լայն ռազմավարական նկատառումներ՝ ամերիկյան ֆինանսա-տնտեսական ակտիվների պաշտպանում եւ պահպանում, ԱՄՆ-ի տեսանկյունից երկարաժամկետ անվտանգություն եւ ամերիկյան հեգեմոնիայի պահպանություն, դաշնակից որոշ պետությունների (այս պահին դա ՆԱՏՕ-ի բլոկի բոլոր պետություններին չի վերաբերվում) առջեւ դաշնակցային պարտավորություններ եւ ամենահետաքրքրական սկզբունքը՝ «Ռազմական միջամտությունը ռազմավարական եւ բարոյական առումով ուղղակի անհրաժեշտ էր»։

Պարզ է, որ այս վերջին սկզբունքը միայն ԱՄՆ-ի նախագահի որոշումով չէ, որ կայացվում է, դրա ետեւում շատ ու շատ ստվերային ուժեր կան, որոնց թվարկելու իմաստը չեմ տեսնում։

Հայտնի է, որ Իրանը դեռ չունի միջուկային զենք, սակայն 2025թ. հունիսին նրա միջուկային ենթակառուցվածքը (ինֆրաստրուկտուրան) մոտեցավ այսպես ասած ճեղքման կետի շեմին, որից հետո Իրանը կարող էր արդեն համապատասխան զենք ստեղծել։ Համենայնդեպս ԱՄՆ Պատերազմի նախարարության (Պաշտպանության նախարարությունը) հետախուզական վարչությունը (PYMO) տվեց գնահատական, որ Իրանը տվյալ պահին կարող է արտադրել բավականաչափ ուրան՝ զենքի համար նախատեսված (համենայն դեպս 1 ռումբի համար)։

Մի հետաքրքրական հայտարարություն եւս։ ԱՄՆ Պատերազմի նախարար **Փիթ Հեգսեթը** 2026թ. մարտի 4-ին, այսինքն պատերազմի 5-րդ օրը հայտարարեց, որ Իրանի գաղտնի ստորաբաժանման ղեկավարը (ըստ երեւույթին նկատի ուներ «Ալ Քուդս» կազմակերպությունը), որը ծրագրավորել էր Թրամփի մահափորձը 2024թ. նույնպես սպանվել է փետրվարի 28-ին՝ հոգեւոր առաջնորդի ռեզիդենցիայում։ (*)

Պատերազմը սկսվել է փետրվարի 28-ին, ժամը 945։ Ամերիկյան կողմը ռազմական գործողությունները անվանեց «էպիկական կատաղություն» ( Epic Fury ), իսրայելական կողմը այն անվանեց «Մռնչացող առյուծը» ( Roaring lion ), իսկ իրանական կողմը՝ «Ճշմարիտ խոստում -IV» ( Operation True promise - IV )։

Կան բազմաթիվ վերլուծություններ, մեկնաբանություններ, կանխագուշակումներ եւ դեռ շատ կլինեն։ Հայաստանի համար իրոք ոչ հասարակ, կարելի է բնութագրել նաեւ որպես վտանգավոր օպերատիվ-քաղաքական իրավիճակ է ստեղծվել, որը չգիտես ինչու մենք շատ հանգիստ ենք ընդունում։ Աստված մեզ պահապան...

Ըստ ԱՄՆ-ի եւ Իսրայելի կրեդոյի, փետրվարի 28-ին սկսած ռազմական գործողությունները ունեն 4 հիմնական նպատակներ՝

1. Մահաբեր բալիստիկ հրթիռների եւ ընդհանրապես հրթիռային արդյունաբերության վերացում Իրանում;
2. Իրանի ռազմա-ծովային նավատորմի ոչնչացում;
3. Վերջնականապես ապահովել այն հանգամանքը, որ Իրանի կողմից սատարվող «պրոքսի» ... 

Փետրվարի 28-ին նախագահ **Դոնալդ Թրամփը** հայտարարեց ամերիկյան մեդիա հարթակներից մեկով ( Truth social ) եւ ընդգծեց, որ ԱՄՆ-ի ռազմական գործողություններին Իրանի դեմ մասնակցելու նպատակը Թեհրանում գործող ռեժիմի տապալումն է։

Ես ուզում եմ ընթերցողիս ուշադրությունը հրավիրել մարտի 6-ին այսպես կոչված օդային հարձակման վրա (իրանական անօդաչու սարք «Արաշ-2») Ադրբեջանի տարածքում։

Ադրբեջանական մամուլում նշվում է, որ դիվերսիոն հարվածներ էին պատրաստվում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի, օդային հարվածներ Նախիջեւանի որոշ օբյեկտների դեմ, նաեւ՝ Իսրայելական դեսպանատան եւ սինագոգի ուղղություններով։

Իրանի արտգործնախարարն ու նախագահը հերքում են այդ ամենը, Ադրբեջանը թիվ 1 մարտական պատրաստվածության է բերում իր զինված ուժերին։ Արդյո՞ք այդ անօդաչու սարքերը, որոնք իբր մինչ պետք է խփեին ադրբեջանական օբյեկտներին, իրոք իրական էին, թե՞ այդ ամենը սարքած էր ըստ նախագծված ծրագրերի հենց Ադրբեջանի ու նրա դաշնակից Իսրայելի կողմից։ Ժամանակը ցույց կտա։

Բոլոր դեպքերում, մարտի 3-ից ադրբեջանական զորքերը կենտրոնացել են իրանական սահմանի երկայնքին։

Եվս մեկ հետաքրքրական տեղեկատվություն։ Ռազմական կոնֆլիկտի առաջին 100 ժամը, այսինքն մոտավորապես 4-րդ օրը, ԱՄՆ-ին արժեցել է 3,7 միլիարդ դոլար։

Եվ վերջում՝

**«Հակամարտության դեպքում, պատերազմի մեջ մտնելուց առաջ, հավատացյալները պետք է սպասեն, մինչեւ մարտը դառնա պարտադիր»**

*(Qur an 5:64, Ղուրան 5:64)*

_*) Խմբագրության կողմից ավելացնենք, որ Թրամփի ուղղությամբ կրակած անձին ամերիկյան քննիչները, ըստ CNN-ի, որեւէ կապ չէին տեսել նրա եւ Իրանի միջեւ։_

# Տեղեկատվական խառնիճաղանջ

⇨1 Այդպիսով՝ վերադառնանք մեր եսիմինչամետ վերլուծաբաններին: Ամերիկամետը գովաբանում է Թրամփին ու նրա հարվածներն Իրանին, թե բա՝ ժողովրդավարական կառավարման հաստատում Իրանում, կամ՝ նավթի համար կռիվ, Չինաստանի պատվարի ոչնչացում, Իրանը չկա այլեւս, եւ այլն՝ վարկած որքան ասես ունի ամերիկամետը: Ռուսամետը խոսում է ցարի իմաստնությունից, Իրանին մենակ չթողնելուց ու զինելուց, առանց Ռուսաստանի որեւէ որոշման անհնարինությունից, Ռուսաստանի հետ Հայաստանի ապագայի լավ լինելուց, թե բա՝ ամերիկյան բազաներին են խփում, Իրանն անսասան է, դեռ սպասեք՝ Արարատ սարն ենք հետ ստանալու, Արցախն էլ Թրամփն է տվել, եւ այլն: Թուրքիան եւ հայ-թուրքական հարաբերությունները գուրգուրող «տեսաբաններ» կան, սրանք մի ժամանակ թունդ ռուսամետ էին, հիմա թուրքական քարոզչության ակամա տարածողներ են դարձել, նույնիսկ կան իրական լոբբինգով զբաղվողներ եւ տեղի ունեցողի պատկերը խեղաթյուրողներ, «Իսրայելը մաքրում է տարածաշրջանը» տեսակետից ելնողներ, Աստված էլ բեթարից ազատի:

Մի խոսքով՝ իսկական բալագան:

Կարող ենք, իհարկե, ասել, թե բանի տեղ մի դրեք ու մի լսեք նրանց, նրանք ավելի շուտ ոչ թե Հայաստանի, այլ այս կամ այն երկրի շահերի ներքո են մտածում, միտք արտաբերում, շահագրգռված կամ համոզմունքո՞վ՝ դա չէ էականը:

Էականն այն է, որ հայ հանրությունը չի պատկերացնում, չի տեսնում իր քթի տակ կատարվողի իրական համապատկերը, շարժառիթներն ու նպատակները, որ մեզ շատ է հարկավոր՝ հասկանալու համար, թե ո՞ր վտանգի դեմքում ո՞նց պահենք մեզ: Բայց ի՞նչ այլընտրանք ենք առաջարկում մարդկանց, որ այդպես ասենք: Ումի՞ց ստանանք քարոզով ու ստով չշաղախված իրազեկում եւ գիտելիք, ուր նայում ենք, ում լսում ենք՝ քարոզ է, ում հառում ենք մեր հայացքը՝ ընդդիմադիր, իշխանական, լրագրող, մտավորական, տնտեսության գիտակ, կուսակցական՝ բոլորը քարոզիչ են, նրանցից ճիշտ խոսք չես լսի:

Եթե նույնիսկ Իրանը որպես ինքնուրույն պետություն մնա , եւ այնտեղ քաոս, ներքին խժդժություններ չսկսվեն, քառասուն միլիոնից ավելի ոչ պարսիկ ազգեր ունեցող այդ երկրում կտիրի հետպատերազմական աղքատություն, ու միլիոններ կգնան հարեւան պետություններ, այդ թվում՝ Հայաստան, մի կտոր հաց վաստակելու:

Երեւանը կլցվի իրանցիներով, մեր մայթերով անգամ չենք կարողանա քայլել, քանի որ այս պահին այնտեղ մոտոցիկլով վզզացող հնդիկներին կավելանան թվով երկու-երեք անգամ գերազանցող, մարդկանց պիցցա ու թմրանյութ առաքող իրանցիները նաեւ:

Ո՞վ պիտի մանրամասն խոսի այս բոլորից, հետագա քայլերի ճանապարհային քարտեզ ներկայացնի, ոչ թե սակի դիմաց քարոզչության բաժին դարձնի մեզ ու բթացնի: Հասկացանք, որ ընտրություններն են դռանը, հասկացանք, որ բոլոր շահ ունեցող պետություններն են մասնակից մեր ընտրություններին, բայց գիշերը տեսնես ո՞նց են քնում երեսուն արծաթի դիմաց հայ հանրությանը խաբող ապակողմնորոշողները, երբ իրենց ստերի պատճառով անվտանգային խնդիրները լուծելու պատրաստ չլինենք, լինեն դրանք պետական այրեր, ընդդիմադիրներ, թե վերլուծաբաններ:

Սա վերաբերում է լրատվությանը նաեւ, սա վերաբերում է քաղաքական դասին նաեւ, որոնցից ամեն մեկի հետեւում ականջներ են, որոնք ուռճացնում կամ նվազեցնում են մարտահրավերները՝ ըստ նպատակահարմարության: Իսկ նրանք, ովքեր հասկանում են այս բոլորը եւ անելիք ունեն՝ լռում են: Որ ասում ենք՝ պետությունը պետք է մտահոգված լիներ անկախ, իրեն ոչ ենթակա ուղեղային կենտրոններ ստեղծելու գործով, որ հենց ինքը զինված լիներ ամենաարդիական զենքով, եւ հայ հանրությունն իրազեկման անկախ, վստահելի աղբյուրներ ունենար՝ տեղեկատվական վակուումի մեջ չհայտնվելով. մեզ չեք լսում ու ամեն կողմից քարոզ եք դեմ տալիս: Ու անգամ արտաքին հետախուզական ծառայությունն է ներգրավված քարոզչության մեջ, փոխանակ տարածաշրջանի ներկա վիճակի մեջ խորանա:

Չկարողացանք, չկարողացանք ստեղծել ուրիշների շահերից, մեր տեղական քաղաքականներից ու անձերից (իշխանական ու ընդդիմադիր) չկախված իրազեկման կենտրոններ, որոնց շահը միայն հայկականը լիներ, չկարողացանք քարոզի թույնից ազատ լրատվադեմքեր ունենալ, որոնք **Նիկոլ Փաշինյանին** կասեին՝ այդպիսի ելույթ չի կարելի Եվրոպական Խորհրդարանում ունենալ, դա հայկական շահից չի բխում, իսկ ընդդիմադիրներին էլ հասկացնել, որ հանուն վարկանիշի չի կարելի ամեն ինչից խոսել՝ Ջերմուկի սարերի դիրքերը գրավելուց (դե գնացեք եւ իրական լուսանկարներ բերեք՝ ինչ արբանյակային լուսանկար)՝ մինչեւ Ռուսաստանին միանալու զառանցանք: Չկարողացանք մեր ունեցած մարդկային ռեսուրսի ազնիվ շերտին համոզել՝ առանց այս կամ այն շահավոր խմբին հարելու մտածել երկրի ապագայի մասին, կազմակերպվել ու դուրս մղել վերջապես երկիրն իրար մեջ բաժանածներին, որոնք կամավոր իրենց տեղը չեն զիջելու:

Ափսոս:

# «Հայ գաղթականները Ֆրանսիական մանդատի ներքո Սիրիայում» գիրքը՝ անգլերեն




«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ Բլումսբերի հրատարակչական «Թորիս» տպագրատունը (I.B. Tauris of Bloomsbury Publishing) վերջերս անգլերեն լեզվով լույս է ընծայել դոկտ. **Վիկտորյա Աբրահամյանի** «Հայ գաղթականները ֆրանսիական մանդատի ներքո Սիրիայում: Պետականությունից զրկվածություն եւ ազգաշինություն Միջին Արեւելքում» (Armenian Refugees in French Mandate Syria: Statelessness and Nation-Building in the Middle East) խորագրով հատորը, որը մաս է կազմում **Պետրոս Տեր-Մաթոսյանի** (Նեբրասկայի «Լինկոլն» համալսարան) խմբագրած «Հայերը արդի եւ հատկապես վաղ շրջանի աշխարհում» մատենաշարին:

Առաջին համաշխարհային պատերազմի, Հայոց ցեղասպանության եւ Թուրքիայի անկախության պատերազմի հետեւանքով Սիրիան դարձավ հազարավոր հայ գաղթականների ապաստարանը, կարդում ենք լրատվության մեջ: 1920-48 թվականները ներառնող այս համապարփակ ուսումնասիրության մեջ Աբրահամյանի առաջնահերթ նպատակն է եղել ներկայացնել տարագրյալ հայ գաղթականների փորձառությունը սիրիական Ջազիրայում, որտեղ նրանք նոր ավյունով փորձել են հարմարվել նոր միջավայրին, բայց նաեւ ակտիվ պայքար մղել հանուն ազգաշինության եւ պետականաշինության՝ ֆրանսիական մանդատի, սիրիական ազգայնամոլության եւ Խորհրդային Հայաստանի խիստ մրցակցային գոյության պայմաններում:

Հայկական, արաբական, ֆրանսիական եւ ռուսական աղբյուրների օգտագործմամբ հեղինակը լույս է սփռում գաղթական կառույցների ծանր իրավիճակի վրա: Նրանք ստիպված էին իրենց գործը առաջ տանել առկա ուժերի միջեւ ընթացող ներքին հակամարտությունների, գաղթականների վերաբնակեցման արեւմտյան եւ խորհրդային ծրագրերի, ինչպես նաեւ թուրքական շովինիզմի հետագա քայլերի իրականացման պայմաններում:

Հեղինակի համոզմամբ, հատորը մարտահրավեր է՝ նետված արեւմտյան հեղինակների այն տեսակետի դեմ, որ հայ տարագրյալները ձայնազուրկ, անօգնական եւ պասիվ էակներ էին, ընկճված եւ ճակատագրի քմահաճույքին թողնված: Ընդհակառակը, նա համոզիչ փաստերով առաջ է քաշում այն թեզը, թե ի՞նչպես են գաղթականները կարեւոր դեր խաղացել եւ ձեւավորել կռվախնձոր դարձած Սիրիայի բնակչության պետականաշինության գործընթացը, երբ բոլոր կողմերից պայքար էր մղվում վերահսկելու առեւտրական ուղիները այդ տարածաշրջանում: Դա ոչ միայն հայերի պատմությունն է, այլեւ սիրիացիների:

Վիկտորյա Աբրահամյանը Ժնեւի համալսարանի հետդոկտորական ուսմանց գիտաշխատող է: Որպես այցելու դասախոս աշխատել է Լոնդոնի տնտեսագիտության քոլեջում եւ Էքս-Մարսել համալսարանում: Ժամանակակից պատմության գծով դոկտորական է պաշտպանել Նոշաթել (Նյուշաթել) համալսարանում, 2023-ին: Ավարտել է Երեւանի համալսարանի բակալավրի եւ մագիստրոսի դասընթացները: Գիտական հոդվածներով բազմիցս հանդես է եկել ակադեմիական ճանաչված պարբերականներում :«Հավատարմությունը վտանգի տակ: Հայ գաղթականները եւ սիրիական մեծ ապստամբությունը» հոդվածի համար 2025-ին արժանացել է «Սիրիական Ուսումնասիրությունների Ասոցիացիայի» թեմատիկ մրցանակին: Նրա հեղինակած նոր գիրքը եւս բազմաթիվ դրական գրախոսականների է արժանացել: Գրառենք դրանցից մի քանիսը: «Վ. Աբրահամյանին հաջողվել է հատկանշական, ինքնատիպ ներդրում կատարել պատմագիտության բնագավառում: Տարբեր լեզուներով աղբյուրների օգտագործմամբ գրված նրա պատկառելի գիրքը արժանի է լուրջ ուշադրության բոլոր այն մարդկանց կողմից, ովքեր հետաքրքրվում են հակամարտությունների, գաղթականների եւ պետականաշինության խնդիրներով եւ մի շարք դերակատարների խճճված հարաբերություններով», **Փիթեր Գադրել**, պրոֆ. Մանչեստրի համալսարանում (Մ. Բրիտանիա):

«Հատորը հրապուրիչ ուսումնասիրություն է տեղահանված մի համայնքի վերաբնակեցման ջանքերի՝ բոլորովին անորոշ ապագայով մի տեղանքում, որտեղ մրցակից ուժեր փորձում են հաստատել իրենց կանոնները», **Լորա Ռոբսոն,** պրոֆ. Յեյլ համալսարանում (ԱՄՆ):

«Աբրահամյանի գիրքը լուրջ, խորապես ուսումնասիրված եւ մանրամասնորեն դիտարկված պատմական աշխատություն է, որը բացահայտում է ցեղասպանությունից մազապուրծ հայերի նոր կյանք սկսելու հմտությունները, ճկունությունը եւ մրցակից ճնշումների պայմաններում համագործակցության եզրեր գտնելու կարողությունները», **Հանս-Լուկաս Կայզեր**, պրոֆ. Նյուքասլ համալսարանում (Ավստրալիա):



Աբրահամյանի հատորը արդեն իսկ ներառվել է ուսանողների եւ գիտաշխատողների գրականության պարտադիր ընթերցանության ցուցակում:

Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.: Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 12.03.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: